

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

0516 «ԱՐՎԵՍՏԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, ԿՈՆՍԵՐՎԱՑՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԹՃԵՐ ԶԻ ԶԹԹ ԾԹ
 Ի ՍՆԾՐ Ս

Ուսումնական հաստատության անվանումը

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

«Նկարիչ-վերականգնող» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ
 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՄ՝ միջին մասնագիտական
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ՝ նկարիչ-վերականգնող
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ միջնակարգ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՄ՝ 3 տարի
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԵՎԸ՝ առկա

(Յ ½, Յ ՃԹԳ, Յ ՃԹԿ)

Տ _____ 20 ____ Յ®

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՄ՝ 0516 «Արվեստի ստեղծագործությունների
 վերականգնում, կոնսերվացում և պահպանում»

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Կուրսը	սեպտեմբեր				հոկտեմ				նոյեմբեր				դեկտեմբեր				հունվ.				փետրվ				մարտ				ապրիլ				մայիս				հունիս				հուլիս				օգոստոս				II. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/																																																																			
	1	7	8	14	15	21	22	28	29.09	5.10	6	12	13	19	20	26	27.10	2.11	3	9	10	16	17	23	24	30	1	7	8	14	15	21	22	28	29.12	4.01	5	11	12	18	19	25	26.01	1.02	2	8	9	15	16	22	23	29	30.03	5.04	6	12	13	19	20	26	27.04	3.05	4	10	11	17	18	24	25	31	1	7	8	14	15	21	22	28	29.06	5.07	6	12	13	19	20	26	27.07	2.08	3	9	10	16	17	23	24	31	Տեսական ուսուցում	Մոդուլների ամփոփում	Պրակտիկա	Ամփոփիչ տեսական ատեստավ. նախապ.	Ամփոփիչ տեսական ատեստավորում	Արձակուրդ	ընդամենը													
2																																				36	2	4					10	52														
3																																				0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	26	2	14					10	52
4																																				0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	16	2	21	1	2			10	52								
Ընդամենը																																				0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	78	6	39	1	2			30	156																								



Տեսական
ուսուցում



Ուսումնա-
կան
պրակտիկա
տեսական
ուսուցմամբ



Ուսումնական
պրակտիկա
առանց տեսական
ուսուցման



Նախաավարտական
արտադրական
պրակտիկա



Մոդուլների
ամփոփում



Նախապատրաստու
մ ամփոփիչ
պետական
ատեստավորման



Ամփոփիչ
պետական
ատեստավո-
րում



Արձակուրդ

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների						
		Քննու թ.	Ստու- գարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		
					Ընդա- մենը	Այդ թվում		3-րդ կիս. 18 շաբ	4- րդ կիս 18 շա բ.	5- րդ կիս 14 շա բ.	6-րդ կիս. 12 շաբ.	7- րդ կիս 16 շա բ.	8-րդ կիս շաբ.	
						Տեսակ. ուսուցո ւմ	Լաբոր. և գործն. աշխ							Սեմին ար պարա պ- մունք
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ , ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ													
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		4		72	54	18		36	36				
2.	Տնտեսագիտության հիմունքներ		4		54	26	28			54				
3.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		3		54	26	24	4	54					
4.	Իրավունքի հիմունքներ		4		36	26	6	4		36				

5.	Պատմություն		4		54	42		12	18	36				
6.	Ռուսաց լեզու		4		54	34	20		18	36				
7.	Օտար լեզու		4		72	42	30		36	36				
8.	Էկոլոգիայի հիմունքներ		3		36	30	6		36					
9.	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		5		18	10	8				18			
10	Ֆիզիկական կուլտուրա		7		156			156	36	36	28	24	32	
	ԸՆԴԱՄԵՆԸ				606	290	140	176	234	270	46	24	32	
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
1.	Հաղորդակցություն		3		54	16	38		54					
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		4		54	18	36			54				
3.	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		3		54	18	36		54					
4.	Համակարգչային օպերատորություն		4		72	12	60				72			
	ԸՆԴԱՄԵՆԸ				234				108	54	72			
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
1.	Ստեղծագործական նյութերի տեխնիկա և տեխնոլոգիա	3			36	14	22		36					
2.	Գծանկարի ստեղծագործում		3		72	4	68		72					

3.	Գունանկարի ստեղծագործում		3		72	4	68		72					
4.	Կոմպոզիցիայի ստեղծագործում		3		72	4	68		72					
5.	Ակադեմիական գծանկարի ստեղծագործում		4		72	0	72			72				
6.	Ակադեմիական գունանկարի ստեղծագործում		4		72	0	72			72				
7.	Ակադեմիական կոմպոզիցիայի ստեղծագործում		4		72	0	72			72				
8.	Պլաստիկ անատոմիա		5		54	4	50				54			
9.	Պլեներային նկարչություն		5		72	0	72				72			
	ԸՆԴԱՄԵՆԸ				594				252	216	72			
	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
1.	Համաշխարհային արվեստի առանձնահատկությունները		3		54	46	8		54					
2.	Ռուս արվեստի պատմության առանձնահատկությունները		4		54	46	8			54				
3.	Արվեստի ստեղծագործությունների նկարագրում		5		72	20	52				72			
4.	Հայ արվեստի առանձնահատկությունները		5		54	46	8				54			
5.	Արվեստի ստեղծագործությունների պահպանում	6	6		72	30	42					72		
6.	Արվեստի ստեղծագործությունների ընթրօրինակում		6		72	0	72					72		
7.	Հայ արվեստի նոր շրջանի պատմության առանձնահատկությունները		6		54	42	12					54		

Շաբաթվա ժամերի քանակը								36	36	36	36	36
-----------------------	--	--	--	--	--	--	--	----	----	----	----	----

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1.	Գործավարության հիմունքներ				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
2.	Ռիթմիկա և պար				ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
3.	Առաջին բուժօգնություն				1. համակարգչային տեխնիկայի
4.	Օտար լեզու (գերմաներեն, ֆրանսերեն)				2. Ստեղծագործական նյութերի
5.	Թատերական արվեստ				3. Վերականգնման նյութերի
6.	Ինժեներական հոգեբանություն				4. Էքսպոնատի ծագման հետազոտության
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	ԿԻՍԱՄՅԱԿ	ՇԱԲԱԹ		ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
1.	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	2, 4, 6	15		ա. հայոց լեզվի,
2.	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	3, 4, 6	14		բ. օտար լեզու,
3.	Նախաավարտական արտադրական պրակտիկա	6	10		գ. ընդհանուր հումանիտար առարկաների,
					դ. անվտանգության և առաջին օգնության,
					ե. անհատական համակարգիչների,
					զ. արվեստի պատմության,
					է. վերականգնման աշխատանքների գործնական պարապմունքների
					ՄԱՐԶԱ - ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
VI. ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ					1. մարզադահլիճ

Ավարտական աշխատանքի կատարում և պաշտպանություն հունիսի 8-ից հուլիսի 5-ը շրջանում	2. մարզահրապարակ
---	------------------

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգաթղթեր, ստուգողական աշխատանքներ: Ստուգաթղթերն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգաթղթերի անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից:
Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:

11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱՀ-Հ-5-11-001

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝ Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 54 ժամ

Տեսական ուսուցում՝ 16 ժամ

Գործնական աշխատանք՝ 38 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար,
2. կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը,
3. կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը,
4. ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում,
5. խթանի համագործակցության ձևավորմանը, շարունակական գործընկերության համար ստեղծի նախապայմաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար,

բ. ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,

գ. ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,

դ. շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,

ե. անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,

բ. բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,

գ. հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,

դ. ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,

ե. մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արծագանքել ըստ իրավիճակի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,

բ. կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,

գ. օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցներ՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,

դ. կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,

ե. վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,

զ. բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,

է. գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 2 ժամ

գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և գրուցակցի կամ հաստատիրոջ,

բ. ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,

գ. առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,

դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,

ե. ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,

զ. պահպանում և եզրափակում է երկխոսությունը,

դ. կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, գրուցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 2 ժամ

գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),

բ. հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,

գ. հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,

դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,

ե. հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,

զ. ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական աշխատանք՝ 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱՀ-ԱԱՕ-5-11-001

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝ Սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 54 ժամ

Տեսական ուսուցում՝ 18 ժամ

Գործնական պարապմունք՝ 36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները,
2. կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան,
3. կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ,
4. ցուցաբերի առաջին օգնություն:

ՄՈԴՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները;

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,

բ. ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,

գ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,

ե. ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,

զ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,

է. ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, պահպանման անհրաժեշտության և չպահպանելու դեպքում դրանց հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ:

Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝

1. անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի,
2. տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,
3. հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,
4. էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը:
5. կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները, (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),

բ. ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),

գ. ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,

դ. ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատունակության վրա ազդող գործոնների, սանիտարահիգիենիկ նորմերի և դրանց պահպանման պահանջների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական աշխատանք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,

բ. ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,

գ. ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,

դ. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ:

Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները:

Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 6 ժամ

գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ցուցաբերել առաջին օգնություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,

բ. ճիշտ է ներկայացնում առաջին օգնության գործողությունների քայլերը,

գ. կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,

գ. կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,

դ. կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,

ե. կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում,

զ. ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր,

մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական աշխատանք՝ 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱՀ-ԱԳՀ-5-11-001

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 54 ժամ՝

տեսական ուսուցում՝ 18 ժամ

գործնական աշխատանք՝ 36 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:

ՈՒՏՔՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. փնտրի և գտնի աշխատանք,
2. հարմարվի աշխատանքային միջավայրին, ապահովի աշխատանքային դրական մթնոլորտ,
3. արդյունավետ աշխատի թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը,
4. ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:

ՄՈԴՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Փնտրել և գտնել աշխատանք;

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները,

բ. կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը (երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,

գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),

դ. ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,

ե. ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային իրավահարաբերություններ ծագման հիմքերի, կողմերի իրավունիքների և պարտականությունների, պայմանագրային հարաբերություններ ձևավորելու նախապայմանների, աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Կհանձնարարվի փնտրել ուսանողի ապագա որակավորմանը համապատասխան հավանական աշխատատեղ(եր)՝ օգտվելով տարբեր բազաներից, վերլուծել հավաքագրված տվյալները և պլանավորել աշխատանքի ընդունվելու իր գործողությունները: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում ուսանողը կկազմի ինքնակենսագրություն (CV) և կներկայացնի իր մասնագիտական ուժեղ կողմերը, կարող է հիմնավորել և լինել համոզիչ՝ տվյալ աշխատատեղում իր համապատասխանության հարցում:

Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտեր (աշխատանքային օրենսգիրք, պայմանագրեր և այլն), տեղեկատվական բազաներ (համակարգիչ, բուկլետներ և այլն), մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 6 ժամ

գործնական աշխատանք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,

բ. հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,

գ. ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,

դ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,

ե. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը: Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ուշադիր լսելու և հասկանալու կարողությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,

բ. ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,

գ. դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,

ե. առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,

զ. կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման, թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը, որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի աշխատանքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց իրավիճակներում՝ պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողը առաջադրում է թիմային շահից ելնող լուծումներ: Վարքագծային դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհագալից վերաբերմունքը, աշխատանքային պարտականությունների կատարման թերացումները կամ անտարբերությունները, անձնական հատկանիշների գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,

բ. բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,

գ. բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,

դ. ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակասլացության,

ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումը կդիտարկվի ուսանողի մոտ նաև գործնականում՝ ուսուցման գործընթացում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական աշխատանք՝ 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը ԱՀ-ՀՕ-5-11-001

Մոդուլի նպատակը Զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական ուսուցում՝ 12 ժամ

գործնական աշխատանք՝ 60 ժամ

Մուտքային պահանջները

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. տիրապետի համակարգչային տեխնիկային և կիրառի օպերացիոն համակարգը,
2. խմբագրի և ֆորմատավորի տեքստերը,
3. պատրաստի և խմբագրի աղյուսակները,
4. կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում,
5. կազմակերպի ցուցադրություն համակարգչային ծրագրերով,

աշխատի համացանցում:

Մոդուլի գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում:

Կատարման չափանիշներ

- ա. տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,
- բ. տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,
- գ. տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն),
- դ. ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,
- ե. ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),
- զ. կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,
- է. օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,
- ը. ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում
- թ. կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

տեսական ուսուցում՝ 2 ժամ

գործնական աշխատանք՝ 10 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում:

Կատարման չափանիշներ

- ա. կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,
- բ. մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,
- գ. կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,
- դ. կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,
- ե. կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

տեսական ուսուցում՝ 2 ժամ

գործնական աշխատանք՝ 8 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Աղյուսակների պատրաստում և խմբագրում:

Կատարման չափանիշներ

- ա. ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստում դրանք,
- բ. կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,
- գ. կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն)
- դ. փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,

զ. ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

տեսական ուսուցում՝ 2 ժամ

գործնական աշխատանք՝ 14 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Գրաֆիկական խմբագրում և նկարագարում:

Կատարման չափանիշներ

ա. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,

բ. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapec պատուհանի պատրաստի ձևերը,

գ. գծագրում է կանոնավոր պատկերներ,

դ. ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,

ե. խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,

զ. գծագրում է տեքստային բլոկներ,

ը. կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

տեսական ուսուցում՝ 2 ժամ

գործնական աշխատանք՝ 8 ժամ

Ուսումնառության արդյունք 5. Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով:

Կատարման չափանիշներ

- ա. ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,
- գ. մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և կատարում պարզ գործողություններ,
- դ. ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անհիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,
- ե. կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,
- ե. ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անհիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:

Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

տեսական ուսուցում՝ 2 ժամ

գործնական աշխատանք՝ 10 ժամ

Ուսումնառության արդյունք 6. Աշխատել համացանցում:

Կատարման չափանիշներ

ա. ներկայացնում է «համացանց» հասկացությունը,

բ. օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,

գ. ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,

դ. փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),

ե. կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,

զ. գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,

է. օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ):

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

տեսական ուսուցում՝ 2 ժամ

գործնական աշխատանք՝ 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-001

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ կարողություններ՝ ճանաչել ստեղծագործական նյութերը, դրանց տարատեսակները և կարողանալ աշխատել դրանցով:

Մոդուլի տևողությունը 36 ժամ

տեսական 14 ժամ

գործնական 22 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. ճանաչել թղթերը և թղթի վրա աշխատելու նյութերը,
2. կարողանալ աշխատել կտավի հետ,
3. պատրաստել ստեղծագործական պարագաներ,
4. իրականացնել գրաֆիկական աշխատանքների ձևավորում:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ճանաչել թղթերը և թղթի վրա աշխատելու նյութերը

Կատարման չափանիշները

- ա. ճանաչում և ճիշտ է թվարկում բոլոր աշխատանքային թղթերը,
- բ. ճանաչում է մատիտների և վրձինների բոլոր տարատեսակները,
- գ. ճանաչում է ջրալույծ ներկերը:

Գնահատման միջոցը

Որպես արդյունքը գնահատելու միջոց կիրառվում է հարցումը, ինչպես նաև ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. թղթի տեսակները
- բ. մատիտների և վրձինների տեսակները
- գ. ջրալույծ ներկեր

Արդյունքի յուրացումը դրական է համարվում եթե թվարկումը և ընտրությունը կատարված է հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում կիրառվում են հետևյալ նյութերը. թղթեր, մատիտներ, վրձիններ, ջրալույծ ներկեր:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 4 ժամ

Արդյունք 2. Կարողանալ աշխատել կտավի հետ

Կատարման չափանիշները

- ա. ճանաչում և ճիշտ է պատրաստում ենթաշրջանակը (գոտիավոր, սեպավոր),
- բ. ճիշտ է պատրաստում հիմնաներկը (տեսակները),
- գ. ճիշտ է հիմնաներկում կտավը և այն ձգում ենթաշրջանակին:

Գնահատման միջոց

Որպես արդյունքը գնահատելու միջոց կիրառվում է հարց ու պատասխան և գործնական աշխատանք:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. ենթաշրջանակի տեսակները և դրանց պատրաստումը,
- բ. հիմնաներկի տեսակները,
- գ. կտավի ձգումը ենթաշրջանակին:

Արդյունքի յուրացումը դրական է համարվում եթե թվարկումը և ընտրությունը կատարված է հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում տրվում են առաջադրանքներ /պատրաստել ենթաշրջանակ, հիմնաներկ, հիմնաներկել կտավը, կտավը ձգել տրված ենթաշրջանակին/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ
գործնական 6 ժամ

Արդյունք 3. Պատրաստել ստեղծագործական պարագաներ

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է պատրաստում վրձինները, մաստեխինները,
- բ. ճիշտ է պատրաստում ներկապնակը և վերամշակում յուղային ներկերով աշխատելու համար,
- գ. ճիշտ է պատրաստում գեղանկարի համար լուծիչները և լաքերը,
- դ. պահպանում է անվտանգության կանոնները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատելման համար տրվում է առաջադրանք:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. վրձինների և մաստեխինների պատրաստում,
- բ. յուղապնակի պատրաստում
- գ. լուծիչների և լաքերի պատրաստում

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե պատրաստումը կատարված է հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում տրվում են առաջադրանքներ /պատրաստել վրձիններ, մաստեխիններ, լուծիչներ և լաքեր, վերամշակել ներկապնակը յուղաներկով աշխատելու համար/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ
գործնական 6 ժամ

Արդյունք 4. Իրականացնել գրաֆիկական աշխատանքների ձևավորում

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է ճանաչում և կիրառում պլակատի համար նախատեսված նյութերը,
- բ. ճիշտ է պատրաստում բազետները և պասպարտուն,
- գ. ճիշտ է կիրառում բրոնզը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատելման համար տրվում է առաջադրանք:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. պլակատի համար նախատեսված նյութեր
- բ. բազետների պատրաստում
- գ. պասպարտունների պատրաստում
- դ. բրոնզի կիրառում

Արդյունքի յուրացումը դրական է համարվում եթե առաջադրանքը կատարված է հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում տրվում են առաջադրանքներ /պատրաստել բազետ և պասպարտու, կիրառել բրոնզ/

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը.

տեսական 4 ժամ

գործնական 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԾԱՆԿԱՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-002

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել գծանկարի կատարում:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 4 ժամ

գործնական 68 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. ճանաչել գծանկարի նյութերը և կարողանալ դրանք ճիշտ կիրառել,
2. կատարել գիպսե երկրաչափական մարմինները և դրանցով ստեղծել կոմպոզիցիա,
3. կատարել գիպսե զարդանախշի պատկերում,
4. կատարել կտորի և դրա ծավալածքների պատկերում,
5. նկարել գլխի գիպսե մանրամասների պատկերներ (քիթ, բերան, ականջ և այլն):

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ճանաչել գծանկարի նյութերը և կարողանալ դրանք ճիշտ կիրառել

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է թվարկում գծանկարի համար անհրաժեշտ նյութերը (թուղթ, մատիտ, ռետին, ածուխ սանգինա, պաստել և այլն),

բ. ճիշտ է նախապատրաստում թուղթը և մատիտները գծանկարի համար,

գ. վարժ կատարում է զուգահեռագծեր, առանցքներ,

դ. ճիշտ է կառուցում երկրաչափական պատկերները, մարմինները,

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է կատարել նախապատրաստական աշխատանք գծանկար սկսելու համար:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. գծանկարի համար անհրաժեշտ նյութերի թվարկում (թուղթ, մատիտ),

բ. թղթի և մատիտի նախապատրաստումը գծանկարի համար,

գ. զուգահեռագծեր և առանցքների կատարում

դ. երկրաչափական պատկերների և մարմինների կառուցում

Արդյունքի յուրացումը համարվում դրական, եթե առաջադրանքները կատարվում են անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում ուսանողը կառուցում է երկրաչափական մարմիններ: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տեսակի թուղթ, տարբեր փափկության գրաֆիտե մատիտներ (h, nb, b):

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 6 ժամ

Արդյունք 2 Կատարել գիպսե երկրաչափական մարմինները և դրանցով ստեղծել կոմպոզիցիա
Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ընտրում թղթի դիրքը՝ ուղղահայաց կամ հորիզոնական,

բ. ճիշտ է տեղադրում առարկան կամ առարկաները թղթի վրա,

գ. շտրիխների միջոցով լուծում է լույս-ստվերային և տարածական խնդիրները, ստանում է մարմինների ծավալները:

դ. կարողանում և ճիշտ է կատարում ճեպանկարներ՝ երկրաչափական և կենցաղային առարկաներից:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է տրված գիպսե առարկաներով ստեղծել կոմպոզիցիա և այն արտահայտել թղթի վրա /կարելի է և ճեպանկարի տեսքով/:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. առարկայի տեղադրում թղթի վրա,

բ. ճեպանկարների կատարում,

գ. լույս-ստվերային, ծավալային և տարածական խնդիրների լուծում շտրիխների միջոցով:

Արդյունքի յուրացումը համարվում դրական, եթե առաջադրանքները կատարվում են հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում ուսանողը կառուցում է կոմպոզիցիա երկրաչափական մարմիններից և դրանք արտահայտում թղթի վրա: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տիպի թուղթ, ռետին, տարբեր փափկության գրաֆիտե մատիտներ, գիպսե երկրաչափական մարմիններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 14 ժամ

Արդյունք 3. Կատարել գիպսե զարդանախշի պատկերում

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կառուցում զարդանախշը,

բ. ճիշտ է տիրապետում գծի պլաստիկային

գ. ճիշտ է լուծում ծավալային խնդիրներ

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գերխնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատկերել գիպսե զարդանախշ:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. զարդանախշի տեղադրում և կառուցում թղթի վրա,

բ. գծի պլաստիկա,

գ. ծավալային խնդիրներ:

Արդյունքի յուրացումը համարվում դրական, եթե առաջադրանքները կատարվում են հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում ուսանողը պատկերում է զարդանախշ: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տիպի թուղթ, ռետին, գրաֆիտե տարբեր փափկության մատիտներ և գիպսե զարդանախշ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 4. Կատարել կտորի և դրա ծավալածքների պատկերում

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կատարում կառուցումները,

բ. ճիշտ է լուծում լույս-ստվերային խնդիրները,

գ. ճիշտ է ստանում կտորի թափանցիկությունը և ծավալը

դ. ճիշտ է ստանում լույս-ստվերային հակադրությունները և անդրադարձումները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումն իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատկերել սպիտակ կտոր՝ ծավալածքներով:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. կառուցումների կատարում,

բ. լույս-ստվերային խնդիրներ,

գ. կտորի թափանցիկություն և ծավալ,

դ. լույս-ստվերային հակադրություններ և անդրադարձումներ:

Արդյունքի յուրացումը համարվում դրական, եթե առաջադրանքները կատարվում են հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում ուսանողը պատկերում է ծավալածքներով կտոր, ստանում է լույս-ստվերային հակադրություններն ու անդրադարձումները: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տիպի թուղթ, ռետին, տարբեր փափկության գրաֆիտե մատիտներ, սպիտակ կտոր;

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 5. Նկարել գլխի գիպսե մանրամասների պատկերներ (քիթ, բերան, ականջ և այլն)

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կառուցում դետալը՝ այն համեմատության մեջ դնելով երկրաչափական մարմնի հետ՝ օգտագործելով երկրաչափական պարզեցման մեթոդը,

բ. ճիշտ է օգտագործում գիծը ծավալ ստանալու համար,

գ. ճիշտ է ստանում դիմագծի արտահայտչականությունը,

դ. ճիշտ է կատարում դիմանկարից ճեպանկարը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումն իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատկերել թղթի վրա գլխի գիպսե որևէ դետալ:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. երկրաչափական պարզեցման մեթոդով դետալի կառուցում,

բ. գծի օգտագործումը ծավալն արտահայտելու համար,

գ. ճեպանկարի կատարում դիմանկարից

Արդյունքի յուրացումը համարվում դրական, եթե առաջադրանքները կատարվում են հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով, որի ընթացքում ուսանողը պատկերում է գլխի գիպսե մանրամասներ: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տիպի թուղթ, ռետին, տարբեր փափկության գրաֆիտե մատիտներ, գլխի գիպսե մանրամասներ /քիթ, բերան, ականջ, աչք/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ
գործնական 16 ժամ

4ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՈՒՆԱՆԿԱՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-003

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել նկարել գեղանկարչական նյութերով:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 4 ժամ
գործնական 68 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. կատարել նյութերի նախապատրաստում աշխատանքի համար,
2. գույնով պատկերել պարզ առարկաներ,
3. պատկերել մրգերով նատյուրմորտ,
4. նկարել ծաղիկներով նատյուրմորտ կտորի ֆոնին:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կատարել նյութերի նախապատրաստում աշխատանքի համար

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ձգում թուղթը տախտակին,

բ. ճիշտ է ընտրում ներկանյութին համապատասխան վրձինը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվում է կատարել նախապատրաստական աշխատանք՝ գունանկար սկսելու համար: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. թղթի ձգումը տախտակին,

բ. համապատասխան ներկանյութի համար վրձինների ընտրումը

Արդյունքի յուրացումը համարվում դրական, եթե առաջադրանքները կատարվում են հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ տախտակ, թուղթ, ներկանյութեր, տարբեր տիպի վրձիններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ
գործնական 6 ժամ

Արդյունք 2. Գույնով պատկերել պարզ առարկաներ
Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է տեղադրում թղթի վրա պատկերը,
- բ. ճիշտ է երանգավորում պատկերը,
- գ. կարողանում է ստանալ լույս, ստվեր, տարածություն, ծավալ,
- դ. ճիշտ է ստանում նյութականությունը,
- ե. ճիշտ է ճանաչում տաք և սառը գույները,
- զ. ճիշտ է ստանում գույները և գույների երանգները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվում է գույնով պատկերել պարզ առարկաներ և թվարկել տաք ու սառը գույները:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. թղթի վրա պատկերների տեղադրումը և երանգավորումը,
- բ. գույնով լույսի, ստվերի, տարածության, ծավալի և նյութականության ստացում
- գ. գույների և երանգների ստացումը:

Արդյունքի յուրացումը համարվում դրական, եթե առաջադրանքները կատարվում են հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների միջոցով, որի ընթացքում տրվում են առաջադրանքներ՝ գույնով պատկերել պարզ առարկաներ: Անհրաժեշտ են տախտակի վրա նախապես ձգված թուղթ, թղթի վրա աշխատելու համար նախատեսված ներկանյութեր:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ
գործնական 16 ժամ

Արդյունք 3. Պատկերել մրգերով նատյուրմորտ

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է կառուցում պատկերը թղթի վրա,
- բ. գույնով ստանում է մրգերի նյութականությունը, ծավալը
- գ. ճիշտ է պատկերում լույսը, ստվերը և անդրադարձումները (լուսային և գունային)

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է թղթի վրա պատկերել մրգերով նատյուրմորտ:

Արդյունքը յուրացված է, եթե առաջադրանքները հիմնականում կատարված են:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով, որի ընթացքում ուսանողը պատկերում է մրգերով նատյուրմորտներ: Անհրաժեշտ է ունենալ թուղթ, մատիտ, թղթի համար ներկանյութեր, բնական, կամ արհեստական մրգեր:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ
գործնական 20 ժամ

Արդյունք 4. Նկարել ծաղիկներով նատյուրմորտ կտորի ֆոնին

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է կառուցում առաջադրանքը,

բ. ճիշտ է աշխատում գույնով,

գ. կարողանում է կատարել ճիշտ ընդհանրացումներ,

դ. ճիշտ է ստանում նյութականություն, ծավալ

ե. ճիշտ է լուծում լույս ստվերային խնդիրները և անդրադարձումները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատկերել ծաղիկներով նատյուրմորտ՝ կտորի ֆոնին:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. գույների հետ աշխատանք,

բ. ընդհանրացումներ,

գ. նյութականություն և ծավալ:

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարված է հիմնականում անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով, որի ընթացքում ուսանողը պատկերում է ծաղիկներով նատյուրմորտներ: Անհրաժեշտ է ունենալ տախտակին ձգված թուղթ, կամ ենթաշրջանակին ձգված կտավ և համապատասխան ներկանյութեր:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 26 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-004

Մոդուլի նպատակը Այս մոդուլն ավարտելուց հետո ուսանողը պետք կարողանա նկարել ճեպանկարներ և ստեղծել կոմպոզիցիաներ:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 4 ժամ

գործնական 68 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. ստեղծել ճեպանկարներ և էսքիզներ ապագա կոմպոզիցիայի համար՝ ընտրելով օրինակներ առարկայական աշխարհից՝ կենցաղային իրեր, երկրաչափական մարմիններ,
2. ստեղծել ճեպանկարներ և էսքիզներ ապագա կոմպոզիցիայի համար՝ ընտրելով հատվածներ բնությունից, պատկերներ կենդանական աշխարհից, մարդկային կազմվածքներ:
3. ստեղծել էսքիզներ՝ օգտագործելով գույների, նրբերանգների, լույսի աղբյուրի ճիշտ բաշխումը,
4. ելնելով պատկերատարածքի բաղկացուցիչների համաչափությունների և գունային հարաբերությունների ներդաշնակության պահանջից՝ կառուցել հորինվածք:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ստեղծել ճեպանկարներ և էսքիզներ ապագա կոմպոզիցիայի համար՝ ընտրելով օրինակներ առարկայական աշխարհից կենցաղային իրեր, երկրաչափական մարմիններ:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կազմակերպում տարբեր առարկաների դասավորումները,

բ. ճիշտ է ապահովում դրանց ներքին կապը և հավասարակշռությունը,

գ. ճիշտ է պահպանում չափերն ու հեռանկարի կանոնները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի, ըստ նախապես արված ճեպանկարների /տարբեր առարկաներից/, ստեղծել կոմպոզիցիա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. առարկաների դասավորումների կազմակերպում,

բ. ներքին կապ ու հավասարակշռություն,

գ. չափեր և հեռանկարի կանոններ:

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը մեծամասամբ կատարված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում ուսանողը կատարում է կոմպոզիցիոն աշխատանքներ: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ տարբեր ճեպանկարներ և նկարչական նյութեր:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 6 ժամ

Արդյունք 2. Ստեղծել ճեպանկարներ և էսքիզներ ապագա կոմպոզիցիայի համար՝ ընտրելով հատվածներ բնությունից, պատկերներ կենդանական աշխարհից, ինչպես նաև մարդկային կազմվածքներ:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կազմակերպում բնության (միջավայր), տարբեր ֆիգուրների փոխադարձ կապը պատկերատարածքում,

բ. ապահովում է լույսի, ստվերի, հեռանկարի ճիշտ օգտագործումը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի բնության տեսարաններից, մարդկային և կենդանական ֆիգուրներից նախապես արված ճեպանկարներից կատարել կոմպոզիցիոն աշխատանք:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. միջավայրի և տարբեր ֆիգուրների փոխադարձ կապը պատկերատարածքում,

բ. լույս-ստվերը և հեռանկարի կանոնները:

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը մեծամասամբ կատարված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում ուսանողը կատարում է զանազան ճեպանկարներ բնության տեսարաններից, կենդանական աշխարհից /ճեպանկարներ կենդանաբանական այգում/ և մարդկային կերպարանքներից, որոնցով ստեղծում է կոմպոզիցիաներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 20 ժամ

Արդյունք 3. Ստեղծել էսքիզներ օգտագործելով գույների, նրբերանգների, լույսի աղբյուրի ճիշտ բաշխումը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կազմակերպում գունահարաբերությունները,

բ. ճիշտ է հասնում գունային ներդաշնակության,

գ. ճիշտ է ապահովում գունատարածքի հավասարակշռությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողը պետք է կատարի կոմպոզիցիոն աշխատանք՝ կիրառելով գույներ, երանգներ, լույսի աղբյուր:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. գունահարաբերությունների կազմակերպում և գունային ներդաշնակություն,

բ. գունատարածքի հավասարակշռություն:

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե աշխատանքը հասցված է ավարտուն վիճակի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով որի ընթացքում ուսանողը կատարում է կոմպոզիցիոն աշխատանքներ՝ հաշվի առնելով գունահարաբերությունները, գույնի ներդաշնակությունն ու հավասարակշռությունը:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 20 ժամ

Արդյունք 4. Ելնելով պատկերատարածքի բաղկացուցիչների համաչափությունների և գունային հարաբերությունների ներդաշնակության պահանջից՝ կառուցել հորինվածք:

Կատարման չափանիշները

ա. պատկերատարածքում ճիշտ է կազմակերպում բաղկացուցիչները (ֆիգուրներ, առարկաներ),

նրանց դիրքավորումները, փոխադարձ հավասարակշռությունները,

բ. անհրաժեշտության դեպքում ճիշտ է պահպանում հեռանկարի կանոնները և ծավալային մշակումները,

գ. ճիշտ է պատկերում գունահարաբերությունների հավասարակշիռ վիճակը և ներդաշնակությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին

կհանձնարարվի ինքնուրույն ստեղծել կոմպոզիցիա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. բաղկացուցիչների փոխադարձ կապ ու հավասարակշռություն,

բ. հեռանկարի կանոններ

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով, որի ընթացքում տրվում են առաջադրանքներ /ուսանողը կատարում է կոմպոզիցիոն աշխատանք՝ երբեմն օգտվելով վերատպություններից: Անհրաժեշտ են նախապես արված ճեպանկարներ, նկարչական նյութեր, վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 22 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-005

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ

համաշխարհային արվեստի պատմությունից, որպեսզի ուսանողը ունակ լինի հետագայում ճիշտ կողմնորոշվել արվեստի առարկայի բնորոշումն իրականացնելիս՝ որ երկրի, որ տարածքի, ժամանակագրական որ հատվածի, ոճի և ուղղության, անհրաժեշտության դեպքում նաև

հեղինակային պատկանելիության հարցերի շրջանակներում: Ուսանողը պետք է տեղյակ լինի և կարողանա տարբերակել հունական, իտալական, ֆրանսիական, գերմանական, բրիտանական, հյուսիսային Եվրոպայի, ինչպես նաև արևելյան և ամերիկյան երկրների արվեստներին բնորոշ ոճական առանձնահատկություններին:

Մոդուլի ստուգությունը 54 ժամ

տեսական 46 ժամ

գործնական 8 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. տարբերակել տվյալ ստեղծագործության պատկանելությունն՝ ըստ ստեղծման վայրի,
2. տարբերակել տվյալ ստեղծագործության կատարման ժամանակաշրջանը,
3. տարբերակել տվյալ ստեղծագործության ոճը, ուղղությունը,
4. պարզաբանել ստեղծագործության հեղինակային պատկանելությունը, իսկ անհայտ հեղինակի դեպքում՝ շրջանը, դպրոցը:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Տարբերակել տվյալ ստեղծագործության պատկանելությունն՝ ըստ ստեղծման վայրի
Կատարման չափանիշները

ա. ճիշտ է բնորոշում, թե որ երկրում ստեղծված ստեղծագործության հետ է առնչվելու,

բ. կարողանում է ստեղծագործությունները տարբերակել ըստ դրանց ստեղծման վայրերի՝ ելնելով կատարման երկրի առանձնահատկություններից:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. առանձին տարածաշրջաններին բնորոշ ստեղծագործական յուրահատկությունները

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առանձնահատկությունների հիմնական մասը տարբերում է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ են համապատասխան գրականություն և վերատպություններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 2. Տարբերակել տվյալ ստեղծագործության կատարման ժամանակաշրջանը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է զանազանում ժամանակագրական առանձնահատկությունները՝ ելնելով տվյալ

ժամանակաշրջանին բնորոշ գեղարվեստական մտածողությունից, ընդունված նկարելաձևերի

միջոցներից,

բ. կայացնում է ճիշտ եզրակացություն տվյալ ստեղծագործության ժամանակագրական պատկանելիության վերաբերյալ:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. տարբեր ժամանակահատվածներին բնորոշ մտածողություն և նկարելաձևեր

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե կարողանում է նշել ժամանակահատվածի յուրահատկությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով, որի ընթացքում ուսանողը եզրակացություն է անում տվյալ նկարի վերաբերյալ: Անհրաժեշտ են վերատպություններ և սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 3. Տարբերակել տվյալ ստեղծագործության ոճը, ուղղությունը

Կատարման չափանիշները

ա. ժամանակաշրջանին և վայրին բնորոշ նկարչական ուղղություններ,

բ. ոճի կամ ուղղության պատմություն ու առանձնահատկություն,

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե կատարված եզրակացությունները հիմնականում ճիշտ են:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. ժամանակաշրջանին և վայրին բնորոշ նկարչական ուղղությունները,

բ. ոճերի առանձնահատկությունները,

գ. ստեղծագործությունների ոճային պատկանելիությունը:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում, ինչպես նաև մեկնաբանում է տվյալ ստեղծագործությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով, որի ընթացքում ուսանողը կարողանում է մեկնաբանել տվյալ ստեղծագործությունը:

Անհրաժեշտ են վերատպություններ և սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 4. Պարզաբանել ստեղծագործության հեղինակային պատկանելությունը, իսկ անհայտ

հեղինակի դեպքում՝ շրջանը, դպրոցը:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կատարում ատրիբուցիոն գործընթացը՝ տիրապետելով արվեստի պատմության

շրջաններին ըստ երկրների, ոճերի և ուղղությունների,

բ. կարողանում է ճիշտ բնորոշել ստեղծագործության հեղինակային պատկանելությունը՝ ելնելով ստեղծագործության ժամանակագրական, ոճային առանձնահատկություններից,

գ. անհայտ հեղինակի ստեղծագործության դեպքում ճիշտ է զանազանում և տարբերակ ում ստեղծագործության գեղարվեստական շրջանի, դպրոցի (ազդեցությունների) նրբությունները և բնորոշել դրանք հնարավոր կոնկրետությամբ:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողը պետք է որոշի որևէ ստեղծագործության պատկանելությունը:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. ատրիբուցիոն գործընթաց,

բ. ստեղծագործության ժամանակագրական, ոճային առանձնահատկություններ,

գ. ստեղծագործության գեղարվեստական շրջանի, դպրոցի (ազդեցությունների) նրբությունները:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է

ներկայացնում տվյալ ստեղծագործությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով, որոնց ընթացքում ուսանողը՝ արտահայտելով իր կարծիքը, խմբի հետ փորձում է որոշել հեղինակային պատկանելությունը: Անհրաժեշտ են վերատպություններ և սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 10 ժամ

գործնական 2 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԾԱՆԿԱՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-006

Մոդուլի նպատակը Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ զարգացնել գծանկարի վարպետություն:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 0 ժամ

գործնական 72 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-002 «Գծանկար կատարելու կարողություններ» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. կատարել դիմանկար,
2. կատարել մարմնի մասերի պատկերում,
3. կառուցել գիպսե դասական ձևապատկերի պատկերում,
4. նկարել գծանկար բնորդից:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կատարել դիմանկար

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կառուցում դիմանկարը,

բ. ճիշտ է պահպանում համաչափությունները,

գ. ճիշտ է պատկերացնում և պատկերում կրճատումները,

դ. ճիշտ է պատկերում դեմքի արտահայտչականությունը,

ե. ճիշտ է լուծում լույս-ստվերային ծավալային խնդիրները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել դիմանկար:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. դիմանկարի կառուցման հիմնական սկզբունքները,

բ. համաչափությունների պահպանումը,

գ. կրճատումներ:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը պահպանում է հիմնական կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ վատման տեսակի A2 ֆորմատի թուղթ, գրաֆիտե մատիտներ, /չոր, կիսաչոր, փափուկ/, ռետին, գիպսե դիմաքանդակ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 2. Կատարել մարմնի մասերի պատկերում

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է պահպանում մարմնամասի համաչափությունները,

բ. ճիշտ է լուծում լույս-ստվերային ծավալային խնդիրները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական պարապմունքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվում է պատկերել մի որևէ մարմնամաս:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. մարմնամասի կառուցման սկզբունքները,

բ. մարմնամասի համաչափությունները:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը պահպանում է հիմնական կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տեսակի թուղթ, գրաֆիտե տարբեր փափկության մատիտներ, ռետին և գիպսե մարմնամաս /որը պետք է նկարվի/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 3. Կառուցել գիպսե դասական ձևապատկերի պատկերում

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կառուցում մարդու կերպարանք,

բ. կարողանում է արտահայտել համաչափությունը և մարդու կերպարանքի շարժումը,

գ. կարողանում է լուծել լույս-ստվերային ծավալային խնդիրները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական պարապմունքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվում է պատկերել մարդու կերպարանք /գիպսե արձան/:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. մարդու կերպարանքի կառուցում,

բ. կերպարի համաչափությունները,

գ. կերպարի շարժման պատկերումը:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը պահպանում է հիմնական կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի /62*41չափի/ վատման տիպի թուղթ, տարբեր փափկության գրաֆիտե մատիտներ, ռետին և գիպսե արձան, որը պետք է պատկերվի:

ՈՒՍՈՍՄԱՆ ԵՐԱՉԽԱՎՈՐՎՈՂ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական 0 ժամ

գործնական 20 ժամ

Արդյունք 4. Նկարել գծանկար բնորդից

Կատարման չափանիշները

ա. կարողանում է ճիշտ կաուցել մարդու կերպարանքը հագուստով,

բ. կարողանում է ճիշտ արտահայտել մարմինը հագուստի տակից,

գ. կարողանում է զուգահեռագծերի միջոցով արտահայտել մարմնի, գործվածքի ֆակտուրան և գույնի խնդիրները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական պարապմունքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվում է պատկերել բնորդ:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. մարդու կերպարանքի կառուցումը հագուստով,

բ. մարմնաձևի արտահայտումը հագուստի տակից,

գ. գույնի տպավորության ստացումը զուգահեռագծերով:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը տիրապետում է հիմնական կանոններին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տիպի թուղթ, տարբեր փափկության գրաֆիտե մատիտներ, ռետին, բնորդ:

ՈՒՍՈՍՄԱՆ ԵՐԱՉԽԱՎՈՐՎՈՂ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական 0 ժամ

գործնական 20 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՈՒՆԱՆԿԱՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-007

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ զարգացնել գունանկար կատարելու վարպետություն: Մոդուլն ուսումնասիրելու արդյունքում ուսանողը կկարողանա պատկերել բնապատկերներ:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 0 ժամ

գործնական 72 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-003 «Գունանկար կատարելու կարողություն» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. նկարել էտյուդ,
2. կատարել նատյուրմորտ կենցաղային առարկաներով, կարպետով կամ գորգով,
3. գույնով պատկերել գիպսե առարկաներ (երկրաչափական մարմիններ, արձան և այլն),
4. կատարել գրիզայլ:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Նկարել էտյուդ

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է պատկերում բնության մանրամասները,

բ. ճիշտ է գունավորում,

գ. ճիշտ է ստանում լույս-ստվերային, տարածական խնդիրները,

դ. ճիշտ է արտահայտում եղանակը (արևոտ, ամպամած, անձրևոտ, ձյուն և այլն):

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել կարճատև աշխատանք /էտյուդ/:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. բնության տեսարանի պատկերում,

բ. եղանակի արտահայտում /արևոտ, ամպամած, ձյուն և այլն/:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը կատարել է աշխատանքի հիմնական մասը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ նկարչական նյութեր /թուղթ, ջրաներկ, գուաշ, կտավ, յուղաներկ՝ իրենց լուծիչներով/:

Աշխատանքը կարելի է կատարել պատուհանից դուրս նայելով կամ անմիջապես բնության գրկում:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 18 ժամ

Արդյունք 2. Կատարել նատյուրմորտ կենցաղային առարկաներով, կարպետով կամ գորգով

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է պատկերում իրերը՝ կառուցման մեջ կիրառելով համեմատությունը երկրաչափական մարմինների հետ՝ երկրաչափական պարզեցման մեթոդով,

բ. ճիշտ է պատկերում գորգի կամ կարպետի զարդանախշը, ճանաչում է զարդանախշի տեսակը (բուսական, կենդանական, վիշապագորգ և այլն),

գ. ճիշտ է լուծում գունային խնդիրները, ստանում է նյութականությունը (կավ, մետաղ, գործվածք),

դ. ճիշտ է լուծում լուսաստվերային և տարածական խնդիրները՝ ուշադրություն դարձնելով լույսի և գույների անդրադարձումներին:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատկերել նատյուրմորտ կենցաղային առարկաներով, կարպետով կամ գորգով: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. երկրաչափական պարզեցման մեթոդի կիրառումը,

բ. գորգի կամ կարպետի զարդանախշերի տեսակները:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը տիրապետում է հիմնական կանոններին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ նկարչական նյութեր /թուղթ, ջրաներկ, գուաշ կամ կտավ, յուղաներկ, տեմպերա/,

կենցաղային առարկաներ /կուժ, թաս, զամբյուղ սպասքի ատրիբուտներ/, կարպետ կամ գորգ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 18 ժամ

Արդյունք 3. Գույնով պատկերել գիպսե առարկաներ (երկրաչափական մարմիններ, արձան և այլն)

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է տեղադրում և կառուցում պատկերը թղթի վրա,

բ. ճիշտ է պատկերում սպիտակ առարկաները գույնով,

գ. ճիշտ է ստանում լույս և ստվերը, տարածությունը, լույսի անդրադարձումը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատկերել գիպսե կամ սպիտակ առարկաներ՝ գույնով /գեղանկար սպիտակ առարկաներով/:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. պատկերի տեղադրումը թղթի վրա,

բ. սպիտակ առարկաների պատկերումը գույնով,

գ. լույսի անդրադարձումը:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե կատարված աշխատանքը հիմնականում անսխալ է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ նկարչական նյութեր /թուղթ, ջրաներկ կամ գուաշ/, գիպսե կամ սպիտակ նյութից առարկաներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 18 ժամ

Արդյունք 4. Կատարել գրիզայլ

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է պատկերում սպիտակ առարկաները մեկ գույնով,

բ. ճիշտ է պատկերում խառը տիպի առարկաներից դրված կոմպոզիցիան ներկի մեկ գույնով, բայց տարբեր երանգներով,

գ. ճիշտ է լուծում լույս-ստվերային խնդիրները, ստանում է տարածությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել գրիզայլ՝ պատկերել առարկաները ներկի մեկ գույնով:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. սպիտակ առարկաների պատկերումը ներկի մեկ գույնով,

բ. խառը տիպի առարկաներից դրված կոմպոզիցիան ներկի մեկ գույնով պատկերում:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե կատարված աշխատանքը հիմնականում անսխալ է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ նկարչական հետևյալ նյութերը՝ թուղթ կամ կտավ, ջրաներկի, գուաշի կամ յուղաներկի մեկ գույն, սպիտակ առարկաների խումբ, խառը տիպի առարկաների խումբ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 18 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-008

Մոդուլի նպատակը Ուսանողը պետք է կարողանա տիրապետել կոմպոզիցիա կառուցելու վարպետությանը՝ նախապես ընտրված էսքիզներն իմի բերելով, տիրապենտելով գծանկարի, գունանկարի ստեղծագործմանը:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 0 ժամ

գործնական 72 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-004 «Կոմպոզիցիայի ստեղծագործում» մոդուլին:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. կառուցել բնանկարի տարբեր հատվածներ, դրանք համաձույլ կերպով տեղադրել ընդհանուր տեսարանում,
2. կառուցել տարբեր առարկաներից բաղկացած առարկայախումբ՝ ապահովելով դրանց փոխադարձ ներքին կապը,
3. կառուցել մարդկանց կերպարանքների խմբակային կոմպոզիցիա,
4. տիրապետել գույների, զանազան երանգների, նրբերանգների վարպետությանը և դրանք կիրառել կոմպոզիցիայում:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կառուցել բնանկարի տարբեր հատվածներ, դրանք համաձույլ կերպով տեղադրել ընդհանուր տեսարանում

Կատարման չափանիշները

ա. օգտագործելով կոմպոզիցիայի համար նախապես արված էսքիզները՝ դրանք նախնական ընտրությունից հետո ճիշտ է տեղադրում հորինվածքում,

բ. ճիշտ է մեկնաբանում պատկերի բովանդակային և կոմպոզիցիոն կենտրոնների հնարավոր տարբերությունները,

գ. ճիշտ է ապահովում հեռանկարը, լուսաօդային միջավայրը, համապատասխան հարաբերությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ռեսանդին հանձնարարվելու է կատարել կոմպոզիցիոն աշխատանք՝ իր իսկ կողմից արված բնանկարների հատվածներից:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. էսքիզների տեղադրումը կոմպոզիցիայում,

բ. պատկերի կոմպոզիցիոն բովանդակության մեկնաբանում:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե կատարված աշխատանքը հիմնականում անսխալ է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Առդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ նկարչական նյութեր և նախապես արված էսքիզներ՝ բնության տեսարաններից:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 2. Կառուցել տարբեր առարկաներից բաղկացած առարկայախումբ՝ ապահովելով դրանց փոխադարձ ներքին կապը

Կատարման չափանիշները

ա. ելնելով առարկաների դիրքավորումից, չափային, ծավալային առանձնահատկություններից՝ ճիշտ է կառուցում փոխհամաձայնեցված հորինվածքը,

բ. ճիշտ դիրքավորմամբ է ապահովում կոմպոզիցիոն հավասարակշիռ վիճակը, որը և առարկայական, և բովանդակային տեսակետներից հանգեցնում է ներդաշնակության:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել կոմպոզիցիոն աշխատանք խառը տիպի առարկաներից՝ ապահովելով դրանց ներքին կապը:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. թղթի վրա հորինվածքի կառուցում,
- բ. առարկաների դիրքային և ծավալային առանձնահատկություններ,
- գ. կոմպոզիցիայի հավասարակշռություն և ներդաշնակցություն:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե կատարված աշխատանքը հիմնականում անսխալ է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ են նկարչական նյութեր, ինչպես նաև կոմպոզիցիայի համար նախատեսված զանազան առարկաներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 3. Կառուցել մարդկանց կերպարանքների խմբակային կոմպոզիցիա

Կատարման չափանիշները

ա. ծանոթ լինելով ժանրերին՝ դրանք ճիշտ է օգտագործում բազմաֆիգուր կոմպոզիցիայում՝

դարձնելով այն խառը ժանրային հորինվածք,

բ. մարդկային ֆիգուրները, նրանց ժեստերը, հայացքները և դիրքավորումները ներդաշնակության տեսակետից ճիշտ է համապատասխանեցնում միջավայրին,

գ. ճիշտ է կառուցում ներդաշնակ կոմպոզիցիա:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել կոմպոզիցիոն աշխատանք՝ մարդկանց խմբակային կերպարներից:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. բազմաֆիգուր կոմպոզիցիա,
- բ. մարդկային տարբեր կերպարների համապատասխանեցումը միջավայրին,
- գ. ներդաշնակ կոմպոզիցիայի կառուցում:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե կատարված աշխատանքը հիմնականում անսխալ է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ են նկարչական նյութեր, ինչպես նաև նախապես արված էսքիզներ՝ մարդկային ֆիգուրներից:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 24 ժամ

Արդյունք 4. Տիրապետել գույների, զանազան երանգների, նրբերանգների վարպետությանը և դրանք կիրառել կոմպոզիցիայում

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է դասավորում գունահարաբերությունները,

բ. ճիշտ է ապահովում գունահարաբերությունների ներդաշնակությունն ու հավասարակշռությունը,

գ. որոշ դեպքերում կառուցում է ճիշտ գունային կոմպոզիցիա:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել կոմպոզիցիոն աշխատանք՝ կիրառելով գույները և գունային գամմաները:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. գունահարաբերությունների դասավորում,

բ. գույների ներդաշնակցություն և հավասարակշռություն:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե առաջադրանքները կատարվում են համարյա անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ են նկարչական տարբեր նյութեր, որոնք նախընտրելի են ուսանողի համար:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 16 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-009

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ ռուսական արվեստի պատմությունից: Որպեսզի ուսանողը ունակ լինի հետագայում ճիշտ կողմնորոշվել արվեստի առարկայի բնորոշումն իրականացնելիս՝ որ տարածքի, ժամանակագրական որ հատվածի, ոճի և ուղղության, անհրաժեշտության դեպքում նաև հեղինակային պատկանելիության հարցերի շրջանակներում:

Մոդուլի տևողությունը 54 ժամ

տեսական 46 ժամ

գործնական 8 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-005 «Համաշխարհային արվեստի առանձնահատկությունները» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. կողմնորոշվել ստեղծագործության ժամանակագրական պատկանելության հարցում, պարզել ժամանակաշրջանը,
2. բնորոշել ստեղծագործության հեղինակային պատկանելությունը,
3. անհայտ հեղինակի դեպքում՝ կողմնորոշվել և ճշտել ստեղծագործության գեղարվեստական դպրոցի, շրջանի պատկանելությունը,
4. պարզաբանել ստեղծագործության հեղինակային պատկանելությունը, անհայտ հեղինակի դեպքում՝ շրջանը, դպրոցը:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կողմնորոշվել ստեղծագործության ժամանակագրական պատկանելության հարցում, պարզել ժամանակաշրջանը

Կատարման չափանիշները

ա. ստեղծագործության ստեղծման ժամանակաշրջանի որոշման եղանակները,

բ. ժամանակաշրջաններին հատուկ տեխնիկայի, նկարելաձևի ու գեղարվեստական մտածողության առանձնահատկությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. ճիշտ է որոշակիացնում ռուսական արվեստի դպրոցի որևէ ստեղծագործության ստեղծման ժամանակաշրջանը,

բ. կարողանում է տարբերակել տվյալ ժամանակաշրջանին բնորոշ տեխնիկան, նկարելաձևն ու գեղարվեստական մտածողության առանձնահատկությունները:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե առաջադրանքները կատարվում են համարյա անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ են համապատասխան գրականություն և դիդակտիկ նյութեր կամ վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 10 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 2. Բնորոշել ստեղծագործության հեղինակային պատկանելությունը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է տարբերակում ռուս հեղինակների ոճական առանձնահատկությունները,

բ. ճիշտ է տարբերակում հեղինակային պատկանելիությունը՝ հաշվի առնելով ժամանակաշրջանին բնորոշ նկարելաձևերը՝ ծանոթ լինելով տվյալ հեղինակի ոճական առանձնահատկություններին, նրա ստեղծագործական շրջաններին, ոճին:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. ռուս հեղինակների ոճական առանձնահատկությունները,

բ. աշխատանքի հեղինակային պատկանելիությունը, ժամանակաշրջանին բնորոշ նկարելաձևերը,

գ. հեղինակների ոճական առանձնահատկությունները:

Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ են համապատասխան գրականություն և դիդակտիկ նյութեր կամ վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 3. Անհայտ հեղինակի դեպքում՝ կողմնորոշվել և ճշտել ստեղծագործության գեղարվեստական դպրոցի, շրջանի պատկանելությունը

Կատարման չափանիշները

ա. ռուսական գեղարվեստական դպրոցները,

բ. գեղարվեստական դպրոցների առանձնահատկությունները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. հայտնի վարպետների ձեռագրերը, նրանց նախընտրած ձևերն ու թեմաները,

դ. ստեղծագործության պատկանելիության հստակեցման ուղիները:

Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ են համապատասխան գրականություն և դիդակտիկ նյութեր կամ վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ
գործնական 2 ժամ

Արդյունք 4. Պարզաբանել ստեղծագործության հեղինակային պատկանելությունը, անհայտ հեղինակի դեպքում՝ շրջանը, դպրոցը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ներկայացնում ռուս արվեստի պատմության շրջանները, ոճերը և ուղղությունները,
բ. ճիշտ է կատարում գործընթացը՝ ելնելով ստեղծագործության ժամանակագրական, ոճային առանձնահատկություններից,

գ. ճիշտ է բնորոշում ստեղծագործության հեղինակային պատկանելությունը,

դ. անհայտ հեղինակի ստեղծագործության դեպքում՝ ճիշտ է զանազանում և տարբերակում ստեղծագործության գեղարվեստական շրջանի, դպրոցի (ազդեցությունների) նրբությունները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. ռուսական արվեստի պատմության շրջանները, ոճերը և ուղղությունները

բ. գեղարվեստական դպրոցների և շրջանների նրբությունները:

Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների հիման վրա: Անհրաժեշտ են համապատասխան գրականություն և դիդակտիկ նյութեր կամ վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ
գործնական 2 ժամ

ՄՈՂՈՒԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-010

Մոդուլի նպատակը Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել արվեստի ստեղծագործությունը ճիշտ նկարագրել:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 20 ժամ
գործնական 52 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ-5-11-001 «Ստեղծագործական նյութերի տեխնիկա և տեխնոլոգիա» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

- 1. նկարագրել արվեստի ստեղծագործության տեխնիկան,
- 2. նկարագրել վնասվածքները,
- 3. կատարել վերականգնման աշխատանքի պլանավորում:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Նկարագրել արվեստի ստեղծագործության տեխնիկան

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ճանաչում թուղթը, կտավը, կաշին, քարը, մետաղը և դրանց որակները,

բ. ճիշտ է ճանաչում ներկանյութը,

գ. եռաչափ ստեղծագործության դեպքում ճիշտ է կատարում չափագրումը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է նկարագրել որևէ ստեղծագործության /թեկուզ ուսանողական աշխատանքներից/ տեխնիկան:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. ստեղծագործության հիմքի նյութերը /թուղթ, կտավ կաշի, քար, մետաղ/ և դրանց որակները.

բ. ներկանյութերը /մատիտ, ջրաներկ, գուաշ, տեմպերա, սանգինա, բիստեր, յուղաներկ, էմալ, խառը տեխնիկա/,

գ. չափագրման իրականացումը /բարձրություն, լայնություն, խորություն հերթականությամբ/:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե առաջադրանքները կատարվում են անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ տարբեր տիպի և տարբեր որակների նյութեր, տարբեր ներկանյութեր և արվեստի տարբեր ստեղծագործություններ /ուսանողական աշխատանքներից/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 8 ժամ

գործնական 12 ժամ

Արդյունք 2. Նկարագրել վնասվածքները

Կատարման չափանիշները

ա. ճանաչում և թվարկում է վնասվածքների տեսակները,

բ. ճիշտ է քարտեզագրում վնասվածքի տեղերը,

գ. ճիշտ է ճանաչում վարակները և լաքաները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է նկարագրել որևէ ստեղծագործություն /ուսանողի աշխատանք, հին կամ վնասված գիրք, թեկուզ վնասված կենցաղային իրեր և այլն/:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. վնասվածքների տեսակները /պատռվածք, քերվածք, շերտազատում, ներկաշերտի, հիմնաներկի թափվածքներ/,

բ. վնասվածքների քարտեզագրում,

գ. վարակներ և լաքաներ /բորբոս, ֆոքսինգ, միջատի հետքեր, մատնահետքեր, յուղային կամ սպիտակուցային լաքաներ/:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը նկարագրում է գրեթե անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ վնասված իրեր, չափագրելու համար քանոն, մետր, թուղթ ու գրիչ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 20 ժամ

Արդյունք 3. Կատարել վերականգնման աշխատանքի պլանավորում

Կատարման չափանիշները

- ա. կարողանում է ճիշտ նկարագրել կատարվելիք վերականգնման աշխատանքի գործընթացը,
- բ. կարողանում է ըստ ստացված տվյալների ճիշտ գրառել, վերլուծել և կատարել հետագա մասնագիտական գործողությունների պլանավորումը,
- գ. ճիշտ է ներկայացնում այդ գործընթացում օգտագործվող քիմիական նյութերն ու լուծույթները,
- դ. ճիշտ է ընտրում սոսնձանյութերը,
- ե. ճիշտ է ընտրում հիմնաներկը և երանգավորման անհրաժեշտ ներկանյութը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել մի որևէ վնասված աշխատանքի վերականգնման գործընթացը և թվարկել վերականգնման համար անհրաժեշտ նյութերը:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. վերականգնման աշխատանքի գործընթացի նկարագրություն
- բ. գործողությունների պլանավորում,
- գ. այդ գործընթացում օգտագործվող քիմիական նյութեր ու լուծույթներ,
- դ. Սոսնձանյութեր, դրանց տոկոսային հարաբերակցությունը,
- ե. ներկանյութեր:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը նկարագրում է գործընթացն ամբողջությամբ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ որևէ վնասված աշխատանք, քիմիական նյութեր և լուծույթներ, սոսնձանյութեր, հիմնաներկեր և ներկանյութեր, ինչպես նաև աշխատանքային գործիքներ /տարբեր լայնության վրձիներ, նշտարներ, մաստեխիներ, նուրբ հղկաթուղթ, տամպոններ և այլն/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 8 ժամ

գործնական 20 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԼԱՍՏԻԿ ԱՆԱՏՈՄԻԱ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-011

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ մարմինը պատկերելու համար անհրաժեշտ կիրառական գիտելիքներ մարդու անատոմիայից:

Մոդուլի տևողությունը 54 ժամ

տեսական 4 ժամ

գործնական 50 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. Ճանաչել և պատկերել հենաշարժիչ համակարգը (կմախք),
2. Պատկերել մկանային համակարգը,
3. Պատկերել գանգը (գանգոսկր, մկաններ),

4. Ինքնուրույն կատարել հավաքական աշխատանք, պատկերել ընտրված մարմնամասը:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ճանաչել և պատկերել հենաշարժիչ համակարգը (կմախք)

Կատարման չափանիշները

ա. օգտվելով պլակատներից և համապատասխան գրականությունից՝ ճշտորեն արտանկարել

հենաշարժիչ համակարգը երկու դիրքից՝ առջևից և հետևից,

բ. ճիշտ է թվարկում ոսկորների անվանումը,

գ. ինքնուրույն ճիշտ է նկարում հենաշարժիչ համակարգի առանձին մանրամասնությունները (գանգ, ձեռք, ոտնաթաթ, ողնաշար և այլն)՝ նշելով դրանց անվանումները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատկերել հենաշարժիչ համակարգի մի դետալ և անվանել դրանք:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. հենաշարժիչ համակարգի ոսկորները,

բ. տարբեր մարմնամասերի շարժումները:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է նկարագրում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ անատոմիական ատլասներ, համապատասխան գրականություն /պլաստիկ անատոմիա նկարիչների համար/, թուղթ ու գրաֆիտե մատիտներ, կմախքի մոդել:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 10 ժամ

Արդյունք 2. Պատկերել մկանային համակարգը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է արտանկարում առանձին մկանները և տիրապետում է դրանց անուններին,

բ. ճիշտ է պատկերում մկանի կրճատումը կամ ձգվածությունը համապատասխան շարժման մեջ,

գ. ճիշտ է պատկերում ամբողջական մկանային համակարգը առջևից և ետևից:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատկերել /արտանկարել/ մկանային համակարգի մի հատված և տալ դրա անվանումը:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. առանձին մկանների պատկերում,

բ. մկանների ձգվածություն և կրճատում,

գ. մկանային համակարգի պատկերումը առջևից և ետևից:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը պատկերում է գրեթե անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ անատոմիական ատլասներ, համապատասխան գրականություն /պլաստիկ անատոմիա նկարիչների համար/, ցանկալի է նաև մկանների մուլյաժներ, թուղթ, մատիտ, ներկեր:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ
գործնական 12 ժամ

Արդյունք 3. Պատկերել գանգը (գանգոսկր, մկաններ)

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է պատկերում գանգը մի քանի դիրքերից, թվարկում է գանգոսկրերի անվանումները,
- բ. ճիշտ է պատկերում գանգի մկանները (տարբեր դիրքեր) և թվարկում է դրանց անվանումները,
- գ. համապատասխան միմիկայի դեպքում ճիշտ է պատկերում դեմքի մկանների շարժը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատկերել գանգը որևէ դիրքից:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. գանգի պատկերումը տարբեր դիրքերից,
- բ. համապատասխան միմիկայի դեպքում մկանների շարժումը:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը պատկերում է գրեթե անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գանգը պատկերող պլակատներ գանգի մակետ, գանգի և գանգամկանների մուլյաժ, թուղթ մատիտ, ներկեր:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ
գործնական 12 ժամ

Արդյունք 4. Ինքնուրույն կատարել հավաքական աշխատանք, պատկերել ընտրված մարմնամասը

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է պատկերում մարմնամասի ոսկորը և անվանում է այն,
- բ. պատկերված ոսկորի վրա ճիշտ է պատկերում համապատասխան մկանները՝ անվանումներով,
- գ. համապատասխան մկաններով տեսքի բերված կառուցվածքը հասցնել ավարտուն մադկային մարմնաձևով տեսքի:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել հավաքական աշխատանք /տրված մարմնամասը պատկերել սկսած ոսկորից՝ հասցնելով մարմնամասը ավարտուն վիճակի/:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. տարբեր մարմնամասերի ոսկորի պատկերում,
- բ. ոսկորին համապատասխան մկանները:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը պատկերում է գրեթե անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման և գործնական աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է ունենալ տարբեր մարմնամասերի մուլյաժներ, թուղթ, մատիտ, ներկանյութեր:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ
գործնական 16 ժամ

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ, որպեսզի կարողանա տարբերակել հայ արվեստի ժամանակագրական, ռճային, դասակարգումները, կարողանա բնորոշել ժամանակագրական և հեղինակային պատկանելությունը:

Մոդուլի տևողությունը 54 ժամ

տեսական 46 ժամ

գործնական 8 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-009 «Ռուսական արվեստի պատմության առանձնահատկությունները» մոդուլը:

Ռևիզիոնային արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. Տարբերակել տվյալ ստեղծագործության պատկանելությունը՝ ըստ ստեղծման վայրի,
2. Տարբերակել տվյալ ստեղծագործության ստեղծման ժամանակաշրջանը,
3. Պարզաբանել ստեղծագործության հեղինակային պատկանելությունը, անհայտ հեղինակի դեպքում՝ շրջանը, դպրոցը:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Տարբերակել տվյալ ստեղծագործության պատկանելությունը՝ ըստ ստեղծման վայրի
Կատարման չափանիշները

ա. ճիշտ է տարբերակում ստեղծագործություններն ըստ դրանց ստեղծման վայրերի,

բ. ճիշտ է ներկայացնում հայ արվեստի գեղարվեստական դպրոցի առանձնահատկությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. հայ արվեստի ստեղծագործությունների առանձնացումը ըստ դրանց ստեղծման վայրի,

բ. հայ արվեստի գեղարվեստական դպրոցի առանձնահատկությունները:

Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, հայ արվեստի ստեղծագործությունների վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/, սլայդներ:

Ռևիզիոնային երաշխավորվող ժամաքանակը

տեսական 16 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 2. Տարբերակել տվյալ ստեղծագործության ստեղծման ժամանակաշրջանը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է զանազանում ժամանակագրական առանձնահատկությունները՝ ելնելով տվյալ ժամանակաշրջանին բնորոշ գեղարվեստական մտածողությունից, ընդունված նկարելաձեռի ընդունված միջոցներից

բ. հանգում է ճիշտ եզրակացության տվյալ ստեղծագործության ժամանակագրական պատկանելիության վերաբերյալ:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. տարբեր ժամանակաշրջաններին բնորոշ գեղարվեստական մտածողություն, ընդունված նկարելաձևեր:

Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, հայ արվեստի ստեղծագործությունների վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/, սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 16 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 3. Պարզաբանել ստեղծագործության հեղինակային պատկանելությունը, անհայտ հեղինակի դեպքում՝ շրջանը, դպրոցը:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ներկայացնում արվեստի պատմության շրջաններն ըստ երկրների, ոճերի և ուղղությունների,

բ. ճիշտ է կատարում ատրիբուցիոն գործընթացը՝ ելնելով ստեղծագործության ժամանակագրական, ոճային առանձնահատկություններից,

գ. իմանալով արվեստի պատմությունները, ճիշտ է բնորոշում ստեղծագործության հեղինակային, պատկանելիությունը,

դ. անհայտ հեղինակի ստեղծագործության դեպքում՝ ճիշտ է զանազանում և տարբերակում ստեղծագործության գեղարվեստական շրջանի, դպրոցի (ազդեցությունների) նրբությունները,

ե. ճիշտ է բնորոշում ստեղծագործությունը՝ հնարավոր կոնկրետությամբ:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. արվեստի պատմության շրջաններ, ըստ երկրների, ոճերի և ուղղությունների,

բ. ատրիբուցիոն գործընթաց,

գ. հեղինակային պատկանելության բնորոշում,

դ. ստեղծագործության գեղարվեստական շրջանի, դպրոցի (ազդեցությունների) նրբությունների զանազանում,

ե. ստեղծագործության բնորոշում՝ հնարավոր կոնկրետությամբ:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում և անում է որոշակի վերլուծություններ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, հայ արվեստի ստեղծագործությունների վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/, սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 14 ժամ

գործնական 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-013

Մոդուլի նպատակը Այս մոդուլն ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է տիրապետի արվեստի ստեղծագործությունները պահպանելու համար համապատասխան միջավայր և պայմաններ ստեղծելու միջոցներին:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 30 ժամ

գործնական 42 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-010 «Արվեստի ստեղծագործությունների նկարագրում» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. զանազանել և տեսակավորել գեղանկարը, պարզաբանել նյութն ու տեխնիկան /կտավ, փայտ, ստվարաթուղթ, նրբատախտակ, կաշի, թուղթ, յուղաներկ, խառը տեխնիկա/,
2. զանազանել և տեսակավորել գծանկարը, պարզաբանել նյութն ու տեխնիկան /թուղթ, ստվարաթուղթ, նրբատախտակ, կաշի, մատիտ, ջրաներկ, կավճամատիտ և այլն/՝ դրանց համապատասխան պահպանության պայմաններն ապահովելու համար,
3. զանազանել և տեսակավորել քանդակը, պարզաբանել նյութը (քարի տարատեսակներ, մետաղի տարատեսակներ, գիպս, փայտ, պլաստիլին)՝ դրանց համապատասխան պահպանության պայմաններն ապահովելու համար,
4. զանազանել ստեղծագործության տեսակը՝ գործվածք, հյուսվածք և այլն, որպեսզի ապահովի պահպանության անհրաժեշտ պայմանները,
5. պարբերաբար կատարել մաքրման-հսկողության աշխատանքներ,
6. պարբերաբար իրականացնել հաշվառում և ստեղծագործության վիճակի նկարագրություն:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Զանազանել և տեսակավորել գեղանկարը, պարզաբանել նյութն ու տեխնիկան /կտավ, փայտ, ստվարաթուղթ, նրբատախտակ, կաշի, թուղթ, յուղաներկ, խառը տեխնիկա/

Կատարման չափանիշները

ա. ցուցանմուշը ճիշտ է դասավորում պահոցներում և ցուցադրությունում,

բ. ճիշտ է ապահովում պահանջված լուսավորությունը, ջերմաստիճանը, խոնավությունը,

գ. անհրաժեշտության դեպքում ճիշտ է իրականացնում օդափոխությունը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. առանձնահատուկ ցուցանմուշների պահոցում կամ ցուցադրությունում տեղադրելու կանոնները,

բ. լուսավորության, ջերմաստիճանի և խոնավության ապահովում,

գ. օդափոխություն:

Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, պահոցներին հատուկ պահարան, որտեղ կարելի է դասավորել ու պահպանել ուսանողների աշխատանքները:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 8 ժամ

Արդյունք 2. Կարողանա զանազանել և տեսակավորել գծանկարը, պարզաբանել նյութն ու տեխնիկան /թուղթ, սովարաթուղթ, նրբատախտակ, կաշի, մատիտ, ջրաներկ, կավճամատիտ և այլն/՝ դրանց համապատասխան պահպանության պայմաններն ապահովելու համար

Կատարման չափանիշները

ա. ստեղծագործությունը ճիշտ է հանում շրջանակներից և համապատասխան փաթեթավորմամբ տեղադրում է տուփերում,

բ. ճիշտ է ապահովում պահանջված լուսավորությունը, ջերմաստիճանը, խոնավությունը,

գ. անհրաժեշտության դեպքում ճիշտ է իրականացնում օդափոխությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. գծանկարի և գրաֆիկական աշխատանքներ տարբերակումը,

բ. շրջանակից ստեղծագործության հանումը և տեղադրումը տուփերում:

Արդյունքը ձեռքբերված է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, պահոցներին հատուկ փաթեթավորման թղթեր, տուփեր և պահարան, որտեղ կարելի է դասավորել ու պահպանել հենց իրենց ուսանողական գրաֆիկական կամ գծանկարչական աշխատանքները:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 6 ժամ

գործնական 6 ժամ

Արդյունք 3. Զանազանել և տեսակավորել քանդակը, պարզաբանել նյութը (քարի տարատեսակներ, մետաղի տարատեսակներ, գիպս, փայտ, պլաստիլին)՝ դրանց համապատասխան պահպանության պայմաններն ապահովելու համար

Կատարման չափանիշները

ա. ելնելով նյութի առանձնահատկություններից՝ ճիշտ է ապահովում անհրաժեշտ ջերմաստիճանը, լուսավորությունը, խոնավությունը,

բ. ճիշտ է իրականացնում օդափոխությունը,

գ. ցուցանմուշը պահոցում ճիշտ է դասավորում ըստ նրա կատարման նյութի և տեխնիկայի:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. քանդակի նյութերի տարբերակումը /քար, մետաղ, գիպս, փայտ և այլն/,

բ. քանդակի պահպանման պայմանները /լույս, ջերմաստիճան, խոնավություն, օդափոխություն/,

գ. քանդակի նմուշի տեղադրումը պահոցում կամ ցուցադրությունում,

Արդյունքը ձեռքբերված է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, պահոցներին հատուկ պահարան, որտեղ կարելի է դասավորել ու պահպանել հենց իրենց ուսանողական քանդակները:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 8 ժամ

Արդյունք 4. Չանագանել ստեղծագործության տեսակը՝ գործվածք, հյուսվածք և այլն, որպեսզի ապահովի պահպանության անհրաժեշտ պայմանները

Կատարման չափանիշները

ա. ելնելով նյութի առանձնահատկություններից՝ ճիշտ է կատարում ստեղծագործության փաթեթավորումը կամ տեղադրումը համապատասխան դարակներում,

բ. ճիշտ է ապահովում պահանջված ջերմաստիճանը, խոնավությունը, լուսավորությունը,

գ. անհրաժեշտության դեպքում ճիշտ է իրականացնում օդափոխումը,

դ. անհրաժեշտության դեպքում կատարում է մասնագիտական ճիշտ ախտահանում:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. գործվածքների տեսակները,

բ. նյութի առանձնահատկություններին համապատասխան ստեղծագործության փաթեթավորումը,

գ. նմուշի պահպանության պայմանները / ջերմաստիճանը, խոնավությունը, լուսավորությունը, օդափոխումը և ճիշտ ախտահանումը/:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, պահոցներին հատուկ պահարան, որտեղ կարելի է դասավորել ու պահպանել հենց իրենց ուսանողական աշխատանքները:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 6 ժամ

գործնական 6 ժամ

Արդյունք 5. Պարբերաբար կատարել մաքրման-հսկողության աշխատանքներ

Կատարման չափանիշները

ա. պարբերաբար ճիշտ է կատարում մաքրման աշխատանքները,

բ. ճիշտ է կիրառում համապատասխան մասնագիտական պարագաները,

գ. ճիշտ է կիրառում ստեղծագործությունների պահպանման համար նախատեսված գործողությունները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. մաքրման աշխատանքների պարբերական կատարումը,

բ. համապատասխան մասնագիտական պարագաների կիրառումը,

գ. ստեղծագործությունների պահպանման համար նախատեսված գործողությունները:
Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հասապատասխան գրականություն, պահոցներին հատուկ պահարաններ, մաքրման պարագաներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 6 ժամ
գործնական 6 ժամ

Արդյունք 6. Պարբերաբար իրականացնել հաշվառում և ստեղծագործության վիճակի նկարագրություն

Կատարման չափանիշները

ա. յուրաքանչյուր ստեղծագործության համար ճիշտ է կազմում գիտական անձնագիրը՝ արձանագրելով բոլոր տվյալները (հեղինակ, դպրոց, շրջան, ստորագրություն, մակագրություն, և այլն),

բ. ճիշտ է տալիս գույքահամարն՝ ըստ կերպարվեստի տեսակի և այդ խմբավորման մեջ եղած հերթականության,

գ. ճիշտ է արձանագրում տվյալ պահին ստեղծագործության վիճակի նկարագրությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. գիտական անձնագրի կազմումը,

բ. գույքահամար,

գ. ստեղծագործության վիճակի նկարագրություն:

Այս աշխատանքները անց են կացվում ուսանողական աշխատանքների վրա:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հասապատասխան գրականություն, գիտական անձնագրի նմուշներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ
գործնական 8 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՐԻՆԱԿՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-014

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ ընդօրինակումներ կատարելու կարողություններ, որի միջոցով ձեռք կբերի հմտություններ մի քանի կատարողական տեխնիկաներից:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 0 ժամ
գործնական 72 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-001 «Ստեղծագործական նյութերի տեխնիկա և տեխնոլոգիա», ԱՍՎ -5-11-006 «Ակադեմիական գծանկար կատարելու կարողություն», ԱՍՎ -5-11-007 «Ակադեմիական գունանկար կատարելու կարողություն», ԱՍՎ -5-11-008 «Ակադեմիական կոմպոզիցիա կառուցելու կարողություն» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. ճիշտ սկսել ընդօրինակման գործընթացը,
2. պատկերը ճիշտ վերարտադրել,
3. կրկնօրինակվող պատկերը հասցնել ավարտուն վիճակի:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ճիշտ սկսել ընդօրինակման գործընթացը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ընտրում նյութը (թուղթ, կտավ, կաշի, փայտ և այլն),

բ. ճիշտ է ընտրում ներկանյութերը և դրանց համապատասխան վրձինները, ինչպես նաև ներկանյութին համապատասխան լուծիչները,

գ. ճիշտ է կատարում մասշտաբային փոփոխությունները (փոքրացնել, մեծացնել)՝ կիրառելով վանդակների մեթոդը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է սկսել ընդօրինակման գործընթաց:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. ընդօրինակվելիք աշխատանքի նյութի ընտրություն,

բ. ներկանյութերի, դրանց համապատասխան վրձինների, ինչպես նաև ներկանյութին համապատասխան լուծիչների ընտրություն,

գ. մասշտաբային փոփոխությունների կատարումը՝ կիրառելով վանդակների մեթոդը:

Արդյունքը համարվում է դրական, եթե ուսանողը կատարում է գործընթացի հիմնական մասը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր նյութեր, ներկանյութեր, վրձինների տեսակներ, լաքեր, լուծիչներ, ինչպես նաև վերատպություններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 24 ժամ

Արդյունք 2. Կարողանալ պատկերը ճիշտ վերարտադրել

Կատարման չափանիշները

ա. նախանկարի համար ճիշտ է ընտրում նյութը՝ կառուցելով և տեղադրելով պատկերը,

բ. ճիշտ է սկսում աշխատել գույնով (մեծ ծավալներ, ընդհանուր կոլորիտ):

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է տրված պատկերը վերարտադրել համապատասխան նյութերով:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. նյութի ընտրությունը,

բ. գույնով աշխատանք:

Արդյունքը համարվում է դրական, եթե ուսանողը կատարում է գործընթացի հիմնական մասը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր նյութեր, ներկանյութեր, վրձիչների տեսակներ, լուծիչներ, ինչպես նաև վերատպություններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 24 ժամ

Արդյունք 3. Կրկնօրինակվող պատկերը հասցնել ավարտուն վիճակի

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ստանում մանրամասնությունների ծավալները գույնով (գծանկարի դեպքում՝

կառուցումներով և շտրիխներով),

բ. ճիշտ է լուծում լուսաստվերային, տարածական խնդիրները՝ կիրառելով հեղինակին հատուկ ոճը,

գ. պահպանելով հեղինակին հատուկ ոճը՝ ճիշտ է կատարում նրբերանգները,

դ. աշխատանքը չորանալուց հետո լաքապատում է ճիշտ ընտրված լաքով:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է տրված պատկերը հասցնել ավարտուն վիճակի:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. ծավալների ստացումը գույնով,

բ. հեղինակին հատուկ ոճի պահպանումով՝ տարածական խնդիրների լուծում,

գ. աշխատանքի լաքապատումը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր նյութեր, ներկանյութեր, վրձիչների տեսակներ, լուծիչներ, լաքեր, ինչպես նաև վերատպություններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 24 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-015

Մոդուլի նպատակը Այս մոդուլի արդյունքում ուսանողը պետք է կարողանա տարբերակել հայ արվեստի նոր շրջանի պատմության առանձնահատկությունները հայ արվեստի մյուս շրջանների աշխատանքներից:

Մոդուլի տևողությունը 54 ժամ

տեսական 42 ժամ

գործնական 12 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-012 «Հայ արվեստի առանձնահատկությունները» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. կողմնորոշվել ստեղծագործության ժամանակագրական պատկանելիության հարցում,
2. պարզաբանել ստեղծագործության հեղինակային պատկանելիությունը,
3. անհայտ հեղինակի դեպքում պարզել ստեղծագործության գեղարվեստական դպրոցը, շրջանը:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կողմնորոշվել ստեղծագործության ժամանակագրական պատկանելիության հարցում

Կատարման չափանիշները

- ա. ծանոթ է ժամանակաշրջանին բնորոշ մոտեցումներին և ճիշտ է ներկայացնում դրանք,
- բ. ըստ տեխնիկայի, թեմայի և ոճական առանձնահատկությունների, ճիշտ է կողմնորոշվում և հստակեցնում, թե որ ժամանակաշրջանում է ստեղծվել արվեստի գործը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. նոր ժամանակաշրջանին բնորոշ մոտեցումներ,
- բ. ժամանակաշրջանի առանձնահատկությունների ներկայացում,
- գ. տեխնիկայի, թեմայի և ոճական առանձնահատկություններ,
- դ. ժամանակաշրջանի հստակեցում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում և կարողանում է անել եզրակացություններ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, հայ նոր ժամանակների արվեստի ստեղծագործությունների վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/, սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 14 ժամ

գործնական 4 ժամ

Արդյունք 2. Պարզաբանել ստեղծագործության հեղինակային պատկանելիությունը

Կատարման չափանիշները

- ա. ծանոթ է տվյալ ժամանակաշրջանի հեղինակներին, նրանց ստեղծագործական ձեռագրերին, որդեգրած ոճական առանձնահատկություններին և ճիշտ է ներկայացնում դրանք,
- բ. ստորագրության առկայության դեպքում՝ դրանց համեմատական անալիզ կատարելով, ճիշտ է պարզաբանում և հիմնավորում ստեղծագործության հեղինակային պատկանելիությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. տվյալ ժամանակաշրջանի մի շարք հայտնի հեղինակներ,
- բ. հայտնի հեղինակների ձեռագրային, ոճական, ստեղծագործական առանձնահատկություններ,
- գ. առանձնահատկությունների մեկնաբանում,
- դ. ստորագրության առկայություն,
- ե. հեղինակային պատկանելության հստակեցում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում և անում է գրագետ եզրակացություններ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, հայ նոր ժամանակների արվեստի ստեղծագործությունների վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/, սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 14 ժամ

գործնական 4 ժամ

Արդյունք 3. Անհայտ հեղինակի դեպքում պարզել ստեղծագործության գեղարվեստական դպրոցը, շրջանը

Կատարման չափանիշները

- ա. ծանոթ է ժամանակաշրջանի գեղարվեստական առանձնահատկություններին, ոճերին և ճիշտ է ներկայացնում դրանք,
- բ. ճիշտ է ներկայացնում ստեղծագործության ստեղծման վայրը, գեղարվեստական դպրոցը, շրջանը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. նոր ժամանակաշրջանի հայ արվեստի գեղարվեստական առանձնահատկությունները և ոճերը,
- բ. ստեղծագործության ստեղծման վայրի, գեղարվեստական դպրոցի մասին,
- գ. այլ դպրոցներից կրած ազդեցություններ:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում և անում է գրագետ եզրակացություններ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, հայ նոր ժամանակների արվեստի ստեղծագործությունների վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/, սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 14 ժամ

գործնական 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԼԵՆԵՐԱՅԻՆ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-016

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ բացօթյա նկարչության հմտություններ:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 0 ժամ

գործնական 72 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-006 «Ակադեմիական գծանկարի ստեղծագործում», ԱՍՎ -5-11-007 «Ակադեմիական գունանկարի ստեղծագործում», ԱՍՎ -5-11-008 «Ակադեմիական կոմպոզիցիա յի ստեղծագործում» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. Անմիջապես բնության գրկում կատարել բնապատկեր,
2. Կատարել էտյուդներ (կարճատև, բայց որոշ առումով ավարտուն աշխատանք),
3. Կատարել բնապատկեր՝ գծանկարով,
4. Ինքնուրույն կատարել կոմպոզիցիոն աշխատանքներ տարբեր նկարչական նյութերով:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Անմիջապես բնության գրկում կատարել բնապատկեր

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ընտրում այն տեսարանները (բնության մի հատված), որը պետք է արտահայտել պատկերում,

բ. ճիշտ է տեղադրում նկարի համար ընտրված հատվածը ընդհանուր պատկերում:

գ. ճիշտ է երանգավորում ընտրված հատվածը, ճիշտ է այն համապատասխանեցնում ընդհանուր պատկերին,

դ. ճիշտ է ստանում լույս-ստվերը և տարածությունը բնության մեջ՝ ճիշտ ընտրելով տաք և սառը երանգների տեղը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է անմիջապես բնության գրկում պատկերել բնապատկեր:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. բնության հատվածի ընտրություն, որը պետք է նկարվի,
- բ. բնտրված հատվածի ճիշտ տեղադրում պատկերատարածքում,
- գ. երանգավորում և համապատասխանեցում ընտրված պատկերին,

դ. լույս-ստվերային և տարածական խնդիրներ:

ե. տաք և սառը երանգների ընտրություն:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքը հիմնականում ճիշտ է կատարված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի նկարչական նյութեր և բացօթյա աշխատանքի համար նախատեսված նկարակալ /էտյուդնիկ/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 18 ժամ

Արդյունք 2. Կատարել էտյուդներ (կարճատև, բայց որոշ առումով ավարտուն աշխատանք)

Կատարման չափանիշները

ա. անմիջապես գույնով ճիշտ է կատարում նախանկարը,

բ. խոշոր վրձնահատվածներով ճիշտ է ստանում պատկերի ծավալներն ու լույս-ստվերը,

գ. պատկերը հասցնում է գրեթե ավարտուն վիճակի:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է անմիջապես բնության գրկում պատկերել էտյուդ-բնապատկեր: Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. գույնով նախանկարի կատարում,

բ. խոշոր վրձնահատվածներով ծավալների ու լույս-ստվեր ստացում /ընդհանրացումներով աշխատանք/,

գ. մանրամասն աշխատանք, աշխատանքի ավարտում:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե աշխատանքը հիմնականում կատարված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի նկարչական նյութեր և բացօթյա աշխատանքի համար նախատեսված նկարակալ /էտյուդնիկ/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 18 ժամ

Արդյունք 3. Կատարել բնապատկեր՝ գծանկարով

Կատարման չափանիշները

ա. թղթի վրա ճիշտ է կատարում ճեպանկարները՝ գրաֆիկական նյութերով (մատիտ, ածուխ, սանգինա և այլն),

բ. ճիշտ է ընտրում բնության հատվածը, որը պետք է պատկերվի,

գ. շտրիխներով ստանում է գունային ճիշտ տպավորություն,

- դ. ճիշտ է ստանում բնության նյութականությունը,
- ե. ճիշտ է լուծում լույս-ստվերային և տարածական խնդիրները,
- զ. վերը նշված աշխատանքից ճիշտ է կատարում օֆորտ կամ լինոգրաֆիա:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է անմիջապես բնության գրկում պատկերել էտյուդ-բնապատկեր՝ գծանկարչական տեխնիկայով:

Արդյունքի խրագրային մանրամասներն են.

- ա. ճեպանկարների կատարում /բնության հատվածներ/
- բ. պատկերի ճիշտ տեղադրում թղթի վրա,
- գ. գրաֆիկական նյութերով (մատիտ, ածուխ, սանգինա և այլն) և շտրիխներով գունային տպավորության ստացում,
- դ. բնության նյութականությանը, լույս-ստվերի և տարածության ստացում,
- դ. գրավյուրա /օֆորտ կամ լինոգրաֆիա/ բնապատկերից:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքը հիմնականում կատարված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի գրաֆիկական նյութեր /մատիտ, ածուխ, սանգինա և այլն/ և բացօթյա աշխատանքի համար նախատեսված նկարակալ /էտյուդնիկ/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 18 ժամ

Արդյունք 4. Ինքնուրույն կատարել կոմպոզիցիոն աշխատանքներ՝ բնության տեսարաններով և տարբեր նկարչական նյութերով:

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է կատարում ճեպանկարը,
- բ. ճիշտ է կատարում գրաֆիկական աշխատանքը,
- գ. ճիշտ է կատարում գեղանկարը,
- դ. ճիշտ է կիրառում խառը տեխնիկա:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է նախապես իր կողմից արված, բնության տեսարաններ պարունակող, ճեպանկարներից ստեղծել կոմպոզիցիոն աշխատանք՝ կիրառելով խառը տեխնիկայի միջոցներ:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. ճեպանկարների կատարում՝ կոմպոզիցիա ստեղծելու համար,
- բ. գրաֆիկական աշխատանքի կատարում,
- գ. գունային աշխատանք/գեղանկար/,

դ. խառը տեխնիկա,

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքը հիմնականում կատարված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի նկարչական նյութեր, նախապես արված ճեպանկարներ և բացօթյա աշխատանքի համար նախատեսված նկարակալ /էտյուդնիկ/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 18 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-017

Մոդուլի նպատակը Ուսանողը պետք ճանաչի վերականգնման գործընթացին անհրաժեշտ նյութերը և կարողանա դրանք ճիշտ կիրառել:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 24 ժամ

գործնական 48 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-001 «Ստեղծագործական նյութերի տեխնիկա և տեխնոլոգիա» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. Պատրաստել գրունտներ (հիմնաներկ),
2. Պատրաստել սոսինձներ,
3. Պատրաստել լուծիչներ և լաքեր:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Պատրաստել գրունտներ (հիմնաներկ)

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է պատրաստում գրունտը թղթի համար,
- բ. ճիշտ է պատրաստում գրունտը կտավի կամ յուղի համար:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողը պետք է ճիշտ ներկայացնի, թե ինչ են իրենցից ներկայացնում հիմնաներկերը, նրանց հիմնական բաղադրությունը, կիրառման մեթոդներն ու ձևերը:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. հիմնաներկեր և նրանց մի քանի հիմնական տեսակներ,

- բ. գրունտներ թղթի համար,
- գ. գրունտի քսում թղթի վրա,
- դ. գրունտ կտավի կամ յուղաներկի համար,

ե. գրունտի քսում կտավի վրա:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում և ճիշտ է քսում գրունտը կտավի կամ թղթի վրա:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն սոսնձանյութեր /ձկան, նապաստակի, ժելատին/ կամ խեժեր, ցինկի կամ կավիճի փոշիներ, գրունտի էլաստիկությունն ապահովող նյութեր /վենեցիան տերպենտին, գլիցերին, մեղր/, խոզանակներ և տարաներ՝ գրունտը պատրաստելու և քսելու համար, թուղթ, կտավ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 8 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 2. Պատրաստել սոսինձներ

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է պատրաստում թղթի համար սոսինձը՝ տարբեր գործընթացների համար տարբեր տոկոսային հարաբերակցությամբ,
- բ. ճիշտ է պատրաստում սոսինձ գեղանկար աշխատանքների համար,
- գ. ճիշտ է պատրաստում սոսինձ մանրանկարչության և սրբապատկերի համար,
- դ. ճիշտ է ընտրում սոսնձի տոկոսային հարաբերությունը համապատասխան պրոցեսի համար:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողը պետք է ներկայացնի, թե ինչ են իրենցից ներկայացնում սոսինձները, դրանցից նի քանիսի բաղադրությունները, կիրառման տեղերն ու ձևերը:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. սոսինձներ և դրանց մի քանի տեսակներ,
- բ. սոսինձներ թղթի համար /ալյուրից և ժելատինից, ցելյուլոզայից, մեթիլ- ցելյուլոզայից /՝ տարբեր գործընթացների համար տարբեր տոկոսային հարաբերակցությամբ,
- գ. սոսինձներ գեղանկար աշխատանքների համար /ձկան կամ սոսինձ, ժելատին, մեղրամոմային սոսինձներ/,
- դ. սոսինձներ մանրանկարչության և սրբապատկերի համար /ձկան սոսինձ, սխտորաջուր/
- ե. համապատասխան պրոցեսի համար /կրկնապատման և եզրաշորտերի ամրացման համար՝ 12-20% , պրոֆիլակտիկայի համար՝ 4-8% / սոսնձի տոկոսային հարաբերության ընտրություն

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում կամ համապատասխան թեստում նշում է ճիշտ պատասխանները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, տարբեր սոսնձանյութեր, խեժեր, տարաներ, մեծ համարի վրձիններ, սոսինձը եփելու պարագաներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 8 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 3. Պատրաստել ներկեր, լուծիչներ և լաքեր

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ճանաչում լուծիչները և լաքերը,

բ. ճիշտ է պատրաստում լուծիչներ գրաֆիկական աշխատանքների մաքրության համար,

գ. ճիշտ է պատրաստում լուծիչներ գեղանկար աշխատանքների մաքրման համար,

դ. ճիշտ է պատրաստում վերականգնման ներկերը՝ պիգմենտներից և խեժերից,

ե. ճիշտ է կիրառում համապատասխան լաքերը (գրաֆիկական աշխատանքներում, գեղանկարում):

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողը պետք է ներկայացնի, թե ինչ են իրենցից ներկայացնում ներկերը, լուծիչները և լաքերը, դրանց հիմնական բաղադրամասերը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. լուծիչներ գրաֆիկական աշխատանքների մաքրության համար/քլերամինի տրիլոնի, լիմոնաթթվի և այլ քիմիական նյութերի լուծույթներ/

բ. լուծիչներ գեղանկար աշխատանքների մաքրման համար /ացետոն, ուայթ սպիրիտ, նաշատիր կամ դրանց խառնուրդներ/,

գ. վերականգնման ներկերի պատրաստում պիգմենտներից և խեժերից,

ե. համապատասխան լաքերի կիրառում (գրաֆիկական աշխատանքներում, գեղանկարում),

զ. քիմիական նյութերով աշխատելիս անվտանգության կանոնների պահպանում:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, տարբեր քիմիական նյութեր, եթերներ, խեժեր, պիգմենտներ, համապատասխան տարաներ՝ լուծույթները և ներկերը ստանալու համար:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 8 ժամ

գործնական 16 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՆՍԵՐՎԱՑՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-018

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ մշակութային արժեքների մասնակի վերականգնման կամ կոնսերվացման կարողություններ:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 24 ժամ

գործնական 48 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-010 «Արվեստի ստեղծագործությունների նկարագրում», ԱՍՎ -5-11-014 «Արվեստի ստեղծագործությունների ընդօրինակում» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. Կատարել էքսպոնատի ճիշտ նկարագրություն և հիմնավորել մասնակի վերականգնման պատճառը,
2. Կատարել մակերեսի մաքրում,
3. Կատարել հին լաքի հեռացում:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կատարել էքսպոնատի ճիշտ նկարագրություն և հիմնավորել մասնակի վերականգնման պատճառը

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է նկարագրում էքսպոնատի տեխնիկան (նյութը),
- բ. ճիշտ է նկարագրում նյութի վիճակը,
- գ. ճիշտ է կատարում էքսպոնատի քարտեզագրությունը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողը պետք է պատկերացնի և ճիշտ գնահատի էքսպոնատի դրությունը, որի հիման վրա պետք է կատարի գրավոր նկարագրություն: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. էքսպոնատի տեխնիկայի (նյութի), նկարագրում,
- բ. նյութի վիճակի նկարագրում,
- գ. էքսպոնատի քարտեզագրությունը:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է նկարագրում էքսպոնատի դրությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, կերպարվեստի ստեղծագործության որևէ նմուշ /ուսանողական աշխատանքներից կամ ձեռքի տակ ունեցած նմուշից /թուղթ, գրիչ, քանոն չափագրելու համար/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 8 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 2. Կատարել մակերեսի մաքրում

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ մեթոդ է ընտրում կտավի մակերեսի մաքրման համար,
- բ. ճիշտ է կատարում գրաֆիկական աշխատանքի մաքրման մեթոդի ընտրությունը,
- գ. լաքաների և միջատների հետքերը հեռացնում է համապատասխան լուծույթով,
- դ. ճիշտ հեղուկներ է օգտագործում խամրած կամ դեղնած լաքը հեռացնելու համար:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողը թվարկում է տվյալ ստեղծագործության համար նախատեսված մաքրման միջոցները և կիրառում այն:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

- ա. կտավի մակերեսի մաքրման միջոցի ընտրություն /թավշյա բարձիկ, մեծ ու փափուկ վրձին, տամպոն, մաքուր ջուր, նաշատիրի լուծույթ, սպիրտ, քիմիական այլ լուծույթ/
- բ. գրաֆիկական աշխատանքի մաքրման մեթոդի ընտրություն /փափուկ վրձին, ռետինի փոշի, քլորամինի, նաշատիրի, տրիլոնի լուծույթներ/,
- գ. լաքաների և միջատների հետքերի հեռացում համապատասխան լուծույթով /պարզապես նշտարով, քլորամինի, նաշատիրի, տրիլոնի լուծույթներ/
- դ. խամրած կամ դեղնած լաք հեռացում համապատասխան լուծույթով,

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, կերպարվեստի այնպիսի նմուշ /ուսանողական աշխատանքներից/, որը կարիք ունի մաքրման: Անհրաժեշտ է ունենալ մաքրման ենթակա նմուշ, մաքրման համար նախատեսված հեղուկներ, վերը նշված այլ միջոցներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 8 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 3. Կատարել հին լաքի հեռացում

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է հեռացնում հին (դեղնած) լաքը համապատասխան հեղուկներով (լուծույթներով),
- բ. ճիշտ է կատարում նոր լաքապատումը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքների հիման վրա: Ուսանողը ճիշտ է ներկայացնում հին լաքի հեռացման և նոր լաքապատման մեթոդները, ինչպես նաև ցույց տալիս գործնականում:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. հին (դեղնած) լաքի մաքրում համապատասխան հեղուկներով (լուծույթներով և տամպոնով՝ ռեզինե ձեռնոցներ հագած),

բ. նոր լաքապատում վրձնով կամ տանպոնով՝ ձեռքի շրջանաձև շարժումներով:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում և կատարում է լաքապատում՝ ճիշտ մեթոդով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, կերպարվեստի այնպիսի նմուշներ /ձեռքի տակ ունեցած որևէ նմուշ, որը կարիք ունի լաքի հեռացման և նոր լաքապատման/, լուծիչներ, լաքեր, տամպոններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 8 ժամ

գործնական 16 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔԱՆԴԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-019

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ ինքնուրույն զարգաբանականներ, քանդակներ կատարելու, իրեր ծեփելու, ինչպես նաև դրանք հետագայում վերականգնելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 12 ժամ

գործնական 60 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-008 «Ակադեմիական կոմպոզիցիայի ստեղծագործում», ԱՍՎ -5-11-010 «Պլաստիկ անատոմիա» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. կատարել էսքիզ (երկրաչափական մարմիններ),
2. կատարել կոմպոզիցիա երկրաչափական մարմիններով (ծեփել)
3. ծեփել մարմնի առանձին դետալներ
4. վերականգնել քանդակները

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կատարել էսքիզ (երկրաչափական մարմիններ)

Կատարման չափանիշները

- ա. ապագա քանդակի համար թղթի վրա ճիշտ է կառուցում առարկայի եռաչափ պատկերը
- բ. ապագա քանդակի համար թղթի վրա ճիշտ է կառուցում զարդանախշի եռաչափ պատկերը

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել էսքիզներ՝ ապագա քանդակի համար:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. ապագա քանդակի համար թղթի վրա առարկայի եռաչափ պատկերի արտահայտում
- բ. ապագա քանդակի համար թղթի վրա զարդանախշի եռաչափ պատկերի արտահայտում

Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը ճիշտ է կատարվել:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ A2, A3 ֆորմատի վատման տիպի թուղթ, գրաֆիտե տարբեր փափկության մատիտներ, երկրաչափական մարմիններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 8 ժամ

Արդյունք 2. Կատարել կոմպոզիցիա երկրաչափական մարմիններով (ծեփել)

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է մշակում նախնական նյութը (կավ, պլաստիլին և այլն),
- բ. ճիշտ է ճանաչում և թվարկում աշխատանքային բոլոր գործիքները,
- գ. ինքնուրույն ճիշտ է ծեփում մեկ երկրաչափական մարմին՝ պատվանդանով,
- դ. ճիշտ է ծեփում երկրաչափական մարմիններով կոմպոզիցիան:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ծեփել մի որևէ երկրաչափական մարմին:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. նախնական նյութի (կավ, պլաստիլին և այլն) մշակում,
- բ. աշխատանքային գործիքների թվարկում և ճանաչում /աշխատանքային սեղան-պատվանդան՝ պտտվող, ս տեկներ/,
- գ. երկրաչափական մարմնի ծեփում՝ պատվանդանով,
- դ. երկրաչափական մարմիններով կոմպոզիցիա. կիրառում է քանդակի համար անհրաժեշտ գործիքներ:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը հիմնականում կատարված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ քանդակի համար նախատեսված արվեստանոց, որտեղ կա կավ, պլաստիլին ստեկների տեսականի, ջուր, աշխատանքային սեղաններ և նախապես արված էսքիզներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 16 ժամ

Արդյունք 3. Ծեփել մարմնի առանձին դետալներ

Կատարման չափանիշները

ա. օգտվելով բնորդից կամ մեկ այլ քանդակից՝ ճիշտ է ծեփում գլխի մանրամասները (աչք, քիթ, բերան և այլն),

բ. օգտվելով բնորդից կամ այլ քանդակից՝ ճիշտ է ծեփում վերջույթները,

գ. ճիշտ է ծեփում մարդու կամ կենդանու կերպարանքները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ծեփել մի որևէ մարմնամաս կամ կերպարանք՝ որպես նյութ կիրառելով կավը:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. գլխի մանրամասների ծեփում (աչք, քիթ, բերան և այլն)՝ օգտվելով բնորդից կամ մեկ այլ քանդակից,

բ. վերջույթների ծեփում՝ օգտվելով բնորդից կամ այլ քանդակից,

գ. մարդու կամ կենդանու կերպարանքները ծեփում,

Արդյունքը յուրացումը դրական է, եթե աշխատանքը հիմնականում կատարված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ քանդակի համար նախատեսված արվեստանոց, որտեղ կա կավ, պլաստիլին ստեկների տեսականի, ջուր, աշխատանքային սեղաններ, առանձին մարմնամասերի կամ կերպարանքների նմուշներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 20 ժամ

Արդյունք 4. Վերականգնել քանդակները

Կատարման չափանիշները

ա. ելնելով քանդակի նյութից՝ ճիշտ է որոշում այն լվանալու համար անհրաժեշտ նյութը (մաքուր ջուր, թույլ լուծույթներ),

բ. ճիշտ է մշակում կոտրվածքի կամ վնասվածքի եզրերը,

գ. ճիշտ է սոսնձում՝ կիրառելով համապատասխան սոսինձ կամ շաղախ,

դ. համապատասխան նյութով ճիշտ է լրացնում բացակայող հատվածները կամ ճաքերը,

ե. հարկ լինելու դեպքում՝ ճիշտ է կատարում երանգավորումը և ճիշտ է ստանում ֆակտուրան:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողը պետք է պատկերացում ունենա քանդակային նյութերի մասին, նշի տվյալ նյութով արված քանդակի մաքրման միջոցները, ճանաչի և թվարկի ամրացման համար կիրառվող սոսինձներն ու շաղախները /ցանկալի է նաև սոսինձների և շաղախների բաղադրությունը/:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. լվանալու համար անհրաժեշտ նյութի (մաքուր ջուր, թույլ լուծույթներ) ընտրություն,
- բ. կոտրվածքի կամ վնասվածքի եզրերի մշակում /կիրառում է տարբեր գործիքներ/,
- գ. համապատասխան սոսնձի ընտրություն և կիրառում /էրոքսիդ, պվա/ կամ շաղախ /կրային, փայտի փոշու և սոսնձի խառնուրդ/,
- դ. բացակայող հատվածների կամ ճաքերի լրացում,
- ե. երանգավորում և ֆակտուրայի ստացում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում, ինչպես նաև ապահովում է «դ» և «ե» կետերի պահանջները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ քանդակի համար նախատեսված արվեստանոց, որտեղ կա կավ, պլաստիլին /հարկ եղած դեպքում ձևերից նմուշ պատրաստելու համար/, քանդակի համար նախատեսված նյութեր, սոսինձներ և շաղախներ, աշխատանքի հղկման նյութեր /նշտար, տարբեր համարների հղկաթուղթ/, ներկանյութեր՝ հարկ եղած դեպքում երանգավորում կատարելու համար:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ

գործնական 16 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՐՄՆԱՆԿԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-020

Մոդուլի նպատակը Սովորողի մոտ ձևավորել որմնանկարչական ստեղծագործությունների վերականգման, արտաքին տեսքի բարելավման և պահպանման հմտություններ:

Մոդուլի տևողությունը 54 ժամ

տեսական 50 ժամ

գործնական 4 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-014 «Արվեստի ստեղծագործությունների ընդօրինակում», ԱՍՎ -5-11-017 «Վերականգնման նյութերի տեխնիկա և տեխնոլոգիա» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. իրականացնել որմնանկարի ծեփաշերտի հիմքերի ամրացում,
2. կատարել որմնանկարի գունաշերտի ամրացում,

3. հեռացնել և հականեխիչ լուծույթների կիրառմամբ ախտահանել որմնանկարի մակերեսի կեղտագոյացությունները,
4. հեռացնել որմնանկարի ոչ հեղինակային արված գունաշերտերը,
5. լրացնել որմնանկարի բացակայող հիմքերը՝ ծեփաշերտով:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իրականացնել որմնանկարի ծեփաշերտի հիմքերի ամրացում

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է կատարում անջատված ծեփաշերտի նախապես պատրաստված լուծույթով եզրապատումը և ամրակներով ամրացումը,
- բ. ճիշտ է կատարում դեստրուկտիվ ծեփաշերտի ամրացումը,
- գ. ճիշտ է ամրացնում ծեփաշերտը ներարկման մեթոդով,
- դ. ճիշտ է օգտագործում ճնշման հարմարանքները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Քանի որ դեռևս անփորձ ուսանողին չեն վստահի հին կամ վնասված որմնանկարի հետ աշխատանք կատարել, ուրեմն կարելի է բավարարվել միայն տեսական արդյունքով:

- ա. որմնանկարի ծեփաշերտի ամրացում,
 - բ. ճնշման հարմարանքների կիրառում:
- Արդյունքի ձեռքբերված է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական աշխատանքների միջոցով, որոնց ընթացքում ուսանողը, որոշ չափով կսովորի սկսել ստեղծել որմնանկար, որի վրա էլ կփորձեն կատարել «վերականգնման» աշխատանքներ: Անհրաժեշտ է ունենալ որմնանկար ստեղծելու համար անհրաժեշտ նյութեր. տախտակներ, ծեփաշերտ ներկանյութեր, ախտահանման և ամրացման համար նյութեր, ինչպես նաև ֆիլմեր՝ որմնանկարի ստեղծման և վերականգնման մասին, հատկապես ծեփաշերտի ամրացման տեսարաններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 6 ժամ

գործնական 4 ժամ

Արդյունք 2. Կատարել որմնանկարի գունաշերտի ամրացում

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է որոշում սոսնձանյութի բաղադրությունը և գունաշերտի սոսնձապատման եղանակը,
- բ. ճիշտ է պատրաստում սոսնձանյութը,
- գ. ճիշտ է կատարում գունաշերտի ամրացումը ըստ սոսնձապատման եղանակի:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

- ա. սոսնձանյութի պատրաստում,
- բ. գունաշերտի ամրացում սոսնձապատման եղանակով:

Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական աշխատանքների միջոցով, որոնց ընթացքում ուսանողը, որոշ չափով կտվորի սկսել ստեղծել որմնանկար, որի վրա էլ կփորձեն կատարել «վերականգնման» աշխատանքներ: Անհրաժեշտ է ունենալ որմնանկար ստեղծելու համար անհրաժեշտ նյութեր. տախտակներ, ծեփաշերտ ներկանյութեր, ախտահանման և ամրացման համար նյութեր, ինչպես նաև ֆիլմեր՝ որմնանկարի ստեղծման և վերականգնման մասին, հատկապես գունաշերտի ամրացման և սոսնձապատման տեսարաններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 10 ժամ

գործնական 0 ժամ

Արդյունք 3. Հեռացնել և հականեխիչ լուծույթների կիրառմամբ ախտահանել որմնանկարի մակերեսի կեղտագոյացությունները

Կատարման չափանիշները

- ա. փորձարկումների շնորհիվ ճիշտ է որոշում մաքրող լուծույթների բաղադրությունը,
- բ. ճիշտ է որոշում կեղտագոյացությունների հեռացման և որմնանկարի ախտահանման եղանակները ու միջոցները,
- գ. ճիշտ է կատարում կեղտագոյացությունների հեռացումն ու որմնանկարի ախտահանումը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

- ա. մաքրող լուծույթների բաղադրության ընտրություն,
 - բ. կեղտագոյացությունների հեռացում և մակերեսի ախտահանում:
- Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական աշխատանքների միջոցով, որոնց ընթացքում ուսանողը, որոշ չափով կտվորի սկսել ստեղծել որմնանկար, որի վրա էլ կփորձեն կատարել «վերականգնման» աշխատանքներ: Անհրաժեշտ է ունենալ որմնանկար ստեղծելու համար անհրաժեշտ նյութեր. տախտակներ, ծեփաշերտ ներկանյութեր, ախտահանման և ամրացման համար նյութեր, ինչպես նաև ֆիլմեր՝ որմնանկարի ստեղծման և վերականգնման մասին, հատկապես կեղտագոյացությունների հեռացման և վարակների ախտահանման տեսարաններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 10 ժամ

գործնական 0 ժամ

Արդյունք 4. Հեռացնել որմնանկարի ոչ հեղինակային արված գունաշերտերը

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է կատարում ստեղծագործության փորձնական մաքրումը,
- բ. ճիշտ է կատարում պաստառների և այլ թղթյա կտորների հեռացումը,
- գ. ճիշտ է կատարում տարբեր սոսնձակավճային ծածկաշերտերի հեռացումը,
- դ. ճիշտ է կատարում ժամանակին կատարված բազմաշերտ գունաներկերի հեռացումը,
- ե. տարբեր նյութերի և աշխատանքների համադրությամբ ճիշտ է մաքրում որմնանկարի մակերեսը ավելի ուշ կատարված ոչ հեղինակային ներկաշերտից:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

- ա. ոչ հեղինակային ներկաշերտի մաքրում,
 - բ. ավելի ուշ արված, ոչ հեղինակային ներկաշերտի մաքրում:
- Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական աշխատանքների միջոցով, որոնց ընթացքում ուսանողը, որոշ չափով կտրվորի սկսել ստեղծել որմնանկար, որի վրա էլ կփորձեն կատարել «վերականգնման» աշխատանքներ: Անհրաժեշտ է ունենալ որմնանկար ստեղծելու համար անհրաժեշտ նյութեր. տախտակներ, ծեփաշերտ ներկանյութեր, ավտահանման և ամրացման համար նյութեր, ինչպես նաև ֆիլմեր՝ որմնանկարի ստողծման և վերականգնման մասին, հատկապես ոչ հեղինակային ներկաշերտի մաքրման տեսարաններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ
գործնական 0 ժամ

Արդյունք 5. Լրացնել որմնանկարի բացակայող հիմքերը՝ ծեփաշերտով

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է որոշում ծեփամածիկի և օգտագործվող սոսնձանյութերի բաղադրությունը,
- բ. ճիշտ է կատարում բացակայող հիմքերի լրացումը ծեփամածիկով,
- գ. ճիշտ է կատարում առաջացած ծեփաշերտի քսահարթումն ու կարծրացումը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

- ա. ծեփամածիկի և սոսնձանյութերի բաղադրության որոշում
- բ. հիմքի լրացում ծեփամածիկով,
- գ. ծեփաշերտի հարթում և կարծրացում:

Արդյունքի ձեռքբերված է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և գործնական աշխատանքների միջոցով, որոնց ընթացքում ուսանողը, որոշ չափով կսովորի սկսել ստեղծել որմնանկար, որի վրա էլ կփորձեն կատարել «վերականգնման» աշխատանքներ: Անհրաժեշտ է ունենալ որմնանկար ստեղծելու համար անհրաժեշտ նյութեր. տախտակներ, ծեփաշերտ ներկանյութեր, ախտահանման և ամրացման համար նյութեր, ինչպես նաև ֆիլմեր՝ որմնանկարի ստեղծման և վերականգնման մասին, հատկապես որմնանկարի բացակայող հատվածների լրացման տեսարաններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ

գործնական 0 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-021

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ հայ արվեստի պատմության նորագույն շրջանից: Որպեսզի ուսանողը ունակ լինի հետագայում ճիշտ կողմնորոշվել արվեստի առարկայի բնորոշումն իրականացնելիս՝ որ տարածքի /սփյուռքահայ արվեստի դեպքում/, ժամանակագրական որ հատվածի, ոճի և ուղղության, անհրաժեշտության դեպքում նաև հեղինակային պատկանելիության հարցերի շրջանակներում:

Մոդուլի տևողությունը 54 ժամ

տեսական 46 ժամ

գործնական 8 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-015 «Հայ արվեստի նոր շրջանի պատմություն» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. կողմնորոշվել ստեղծագործության ժամանակագրական պատկանելության հարցում, պարզել ժամանակաշրջանը,
2. բնորոշել ստեղծագործության հեղինակային պատկանելիությունը,
3. անհայտ հեղինակի դեպքում կողմնորոշվել և ճշտել ստեղծագործության գեղարվեստական դպրոցի, շրջանի պատկանելիությունը,
4. պարզաբանել ստեղծագործության հեղինակային պատկանելիությունը, անհայտ հեղինակի դեպքում՝ շրջանը, դպրոցը:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կողմնորոշվել ստեղծագործության ժամանակագրական պատկանելության հարցում, պարզել ժամանակաշրջանը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է տարբերակում հայ նորագույն ժամանակաշրջանի նկարիչներին և նրանց ոճերը,

բ. ըստ ստեղծագործության տեխնիկայի, նկարելաձևի ու գեղարվեստական մտածողության առանձնահատկության՝ ճիշտ է հստակեցնում ստեղծման ժամանակաշրջանը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. հայ նորագույն ժամանակաշրջանի նկարիչների ճանաչում,

բ. նրանց ոճական առանձնահատկությունների տարբերակում,

գ. ստեղծման ժամանակաշրջանի հստակեցում:

Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, հայ նորագույն ժամանակների արվեստի ստեղծագործությունների վերատպույթներ /ռեպրոդուկցիաներ/, սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 10 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 2. Բնորոշել ստեղծագործության հեղինակային պատկանելիությունը

Կատարման չափանիշները

ա. նկատի ունենալով ժամանակաշրջանին բնորոշ նկարելաձևերը՝ ճիշտ է հստակեցնում հեղինակային պատկանելիությունը,

բ. ծանոթ լինելով այլ հեղինակների ոճական առանձնահատկություններին՝ ճիշտ համեմատություն է անում տվյալ ստեղծագործության հետ,

գ. ծանոթ լինելով տվյալ հեղինակի ստեղծագործական շրջաններին է ճիշտ է հստակեցնում հեղինակային պատկանելիությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. հեղինակային պատկանելության հստակեցում ըստ ժամանակաշրջանին բնորոշ նկարելաձևերի,

բ. համեմատություններ այլ ստեղծագործության հետ,

գ. հեղինակային պատկանելության հստակեցում:

Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, հայ նորագույն ժամանակների արվեստի ստեղծագործությունների վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/, սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 3. Անհայտ հեղինակի դեպքում կողմնորոշվել և ճշտել ստեղծագործության գեղարվեստական դպրոցի, շրջանի պատկանելիությունը

Կատարման չափանիշները

ա. ծանոթ լինելով ժամանակաշրջանին բնորոշ տեխնիկային՝ հստակեցնում է ստեղծագործության գեղարվեստական դպրոցի պատկանելիությունը,

բ. նկատի ունենալով տվյալ ժամանակաշրջանի վարպետների ստեղծագործական ձեռագրերն ու նախընտրած թեմաները՝ հստակեցնում է ստեղծագործության գեղարվեստական շրջանը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. ստեղծագործության գեղարվեստական դպրոցի պատկանելության հստակեցում,

բ. ստեղծագործության գեղարվեստական շրջանի հստակեցում:

Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, հայ նորագույն ժամանակների արվեստի ստեղծագործությունների վերատպություններ /ռեպրոդուկցիաներ/, սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 4. Պարզաբանել ստեղծագործության հեղինակային պատկանելիությունը, անհայտ հեղինակի դեպքում՝ շրջանը, դպրոցը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ներկայացնում հայ արվեստի պատմության շրջանները՝ մասնավորապես նորագույն շրջանի ոճերն ու ուղղությունները,

բ. կատարում է ճիշտ ատրիբուցիոն գործընթաց՝ ելնելով ստեղծագործության ժամանակագրական, ոճային առանձնահատկություններից,

գ. ճիշտ է բնորոշում ստեղծագործության հեղինակային պատկանելիությունը,

դ. անհայտ հեղինակի ստեղծագործության դեպքում՝ ճիշտ է զանազանում և տարբերակում ստեղծագործության գեղարվեստական շրջանի, դպրոցի (ազդեցությունների) նրբությունները՝ բնորոշելով հնարավոր հստակությամբ:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

ա. հայ նորագույն շրջանի գեղարվեստական ոճերն ու ուղղությունները,

բ. ատրիբուցիոն գործընթաց,

գ. տարբերել ստեղծագործության ոճային և ժամանակագրական առանձնահատկությունները,

դ. հեղինակային պատկանելիության բնորոշում,

ե. այլ դպրոցների ազդեցության որոշում՝ անհայտ հեղինակի դեպքում:

Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, հայ նորագույն ժամանակների արվեստի ստեղծագործությունների վերատպույթություններ /րեպրոդուկցիաներ/, սլայդներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 12 ժամ

գործնական 2 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԻՄԱՆԿԱԲ

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-022

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ տարբեր նյութերով դիմանկար ստանալու հմտություններ:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 0 ժամ

գործնական 72 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-006 «Ակադեմիական գծանկարի ստեղծագործում», ԱՍՎ -5-11-007 «Ակադեմիական գունանկարի ստեղծագործում», ԱՍՎ -5-11-008 «Ակադեմիական կոմպոզիցիա յի ստեղծագործում» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. կատարել դիմանկարի նախանկար,
2. կատարել ավարտուն դիմանկար գույնով,
3. պատկերել խիստ բնութագրիչ դիմագծերով դիմանկար (ծերունի):

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կատարել դիմանկարի նախանկար

Կատարման չափանիշները

- ա. մատիտով թղթի վրա ճիշտ է տեղադրում և կառուցում գլուխը,
- բ. կառուցման ընթացքում ճիշտ է օգտվում երկրաչափական մարմինների համեմատությունից,
- գ. ճիշտ է պահպանում դեմքի համաչափությունները,
- դ. շտրիխներով ճիշտ է ստանում է դիմանկարը,
- ե. ամբողջությամբ ճիշտ է լուծում լույս-ստվերային և ծավալային խնդիրները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել դիմանկարի նախանկար՝ գծանկարի տեխնիկայով:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. մատիտով թղթի վրա գլխի տեղադրում և կառուցում,
- բ. երկրաչափական պարզեցման մեթոդի կիրառում,
- գ. դեմքի համաչափությունների պահպանում,
- դ. շտրիխների կիրառմամբ դիմանկարի պատկերում,
- ե. լույս-ստվերային և ծավալային խնդիրներ:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքը հիմնականում ճիշտ է կատարված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տիպի թուղթ, գրաֆիտե տարբեր փափկության մատիտներ, ռետին, գիպսե գլխաքանդակ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 20 ժամ

Արդյունք 2. Կատարել ավարտուն դիմանկար գույնով

Կատարման չափանիշները

- ա. թղթի կամ կտավի վրա ճիշտ է կառուցում և տեղադրում դեմքը,
- բ. գույնով, խոշոր վրձնահարվածներով ճիշտ է ստանում խոշոր ծավալները և լույս-ստվերը,
- գ. աշխատանքները ճիշտ է նրբացնում՝ այն հասցնելով ավարտուն վիճակի:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել ավարտուն դիմանկար՝ որևէ գեղանկարչական նյութով: Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. թղթի կամ կտավի վրա դեմքի կառուցում գույնով,

բ. խոշոր վրձնահարվածներով խոշոր ծավալների և լույս-ստվերի ստացում,

գ. նրբերանգների և նուրբ վրձնահարվածների միջոցով աշխատանքի ավարտում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը մեծամասամբ կատարված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տիպի թուղթ, կտավ, գրաֆիտե տարբեր փափկության մատիտներ, ռետին, ներկահյութեր, գիպսե գլխաքանդակ կամ բնորդ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 24 ժամ

Արդյունք 3. Պատկերել խիստ բնութագրիչ դիմագծերով դիմանկար (ծերունի)

Կատարման չափանիշները

ա. թղթի վրա մատիտով ճիշտ է կառուցում դեմքը և նրա բնութագրիչ ծավալները,

բ. ճիշտ է կիրառում գծի պլաստիկան, ստանում է փոքր ծավալներ (կնճիռներ),

գ. շտրիխներով ճիշտ է ստանում լույս-ստվերը, ծավալը՝ ամբողջությամբ,

դ. աշխատանքը ճիշտ է հասցնում ավարտուն վիճակի (ապահովում է արտաքին նմանությունը),

ե. նույն դիմանկարը ճշտորեն կատարում է գեղանկարչական որևէ նյութով:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել ավարտուն դիմանկար՝ խիստ բնութագրիչ դիմագծերով, գրաֆիկական կամ ֆեզանկարչական որևէ նյութով:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. պատկերատարածքի վրա դեմքի և նրա բնութագրիչ ծավալների պատկերում,

բ. գծի պլաստիկանյի կիրառում,

գ. փոքր ծավալների և կնճիռների պատկերում,

դ. ամբողջական ծավալի ստացում,

ե. արտաքին նմանության պահպանում,

զ. աշխատանքի կրկնում գեղանկարչական որևէ նյութով:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը հիմնականում կատարված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տիպի թուղթ, կտավ, գրաֆիտե տարբեր փափկության մատիտներ, ռետին, ներկահյութեր, խիստ բնութագրիչ դիմագծերով դիմաքանդակ կամ բնորդ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 28 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-023

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել կատարել կոնկրետ անձի դիմանկար՝ դրանում արտահայտելով խիստ բնութագրիչ դիմագծերը և տարիքային արտահայտությունները:

Մոդուլի տևողությունը 54 ժամ

տեսական 0 ժամ

գործնական 54 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-022 «Դիմանկար» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. կառուցել դիմանկար,
2. գույնով պատկերել դիմանկարը,
3. կատարել արտահայտիչ դիմանկարներով թեմատիկ կոմպոզիցիա:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կառուցել դիմանկար

Կատարման չափանիշները

- ա. նախանկարի համար ընտրված նյութով ճիշտ է կառուցում դիմանկարը,
- բ. ճիշտ է պատկերում այդ նկարին հատուկ համաչափությունները,
- գ. շտրիխներով ճիշտ է ստանում դիմանկարը և նրա արտահայտչականությունը,
- դ. ճիշտ է ստանում մաշկի և մազերի գույնի տպավորությունը, աչքերի փայլը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է գծանկարի տեխնիկայով պատկերել դիմանկար:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. նախանկարի կառուցում,
- բ. համաչափությունների պահպանում,
- գ. շտրիխներով արտահայտչականության ստացում,
- դ. գույնի և նյութականության տպավորություն:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ A2 ֆորմատի վատման տիպի թուղթ, գրաֆիտե տարբեր փափկության մատիտներ, ռետին, որևէ դիմաքանդակ կամ բնորդ, որից պետք է արվի դիմանկար:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 12 ժամ

Արդյունք 2. Գույնով պատկերել դիմանկարը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կառուցում դիմանկարը գույնով՝ ուշադրություն դարձնելով այդ դեմքի համաչափություններին,

բ. ճիշտ է ստանում դեմքի արտահայտչականությունը, մաշկի գույնը, աչքերի փայլը, սևեռուն հայացքը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է գույնով պատկերել դիմանկար:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. դիմանկարի կառուցում գույնով,

բ. համաչափությունների պահպանում,

գ. դեմքի արտահայտչականության, սևեռուն հայացքի արտահայտում,

դ. ներկանյութին համապատասխան տեխնիկայի պահպանում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքը հիմնականում ճիշտ է կատարված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ թուղթ կամ կտավ, համապատասխան ներկանյութ, բնորդ, որից պետք է արվի դիմանկար:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 12 ժամ

Արդյունք 3. Կատարել արտահայտիչ դիմանկարներով թեմատիկ կոմպոզիցիա

Կատարման չափանիշները

ա. անմիջապես բնորդից արված ճեպանկար-դիմանկարներից, որտեղ առկա են դեմքերի արտահայտչականությունը, ճիշտ է կատարում կոմպոզիցիոն նախանկար,

բ. կոմպոզիցիոն նախանկարը գույնով ճիշտ է հասցնում ավարտուն վիճակի՝ չխախտելով դիմանկարի արտահայտչականությունը,

գ. առաջադրանքի մեկ մանրամասնությունից ճիշտ է կատարում գրավյուրան:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ստեղծել կոմպոզիցիա՝ արտահայտիչ դիմանկարներով:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. բնորդից արված ճեպանկար-դիմանկարներից, կոմպոզիցիոն նախանկարի կատարում,

բ. դեմքի արտահայտչականության պահպանում,

գ. ավարտուն աշխատանք գույնով,

դ. դիմանկար գրավյուրայով:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքը նիմնականում ճիշտ է կատարված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ նախապես արված արտահայտիչ դիմանկարներ պարունակող ճեպանկարներ, տարբեր նկարչական նյութեր, գրավյուրայի համար ցինկ կամ լինոլեում, փորագրության գործիքներ տպագրական հերկ և հաստոց:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 0 ժամ

գործնական 30 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՓՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ, ՄԱՆՐԱՆԿԱՐԻ ԵՎ ԳԾԱՆԿԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-024

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ կիրառական գիտելիքներ և հմտություններ՝ գրաֆիկական աշխատանքների, փորագրության, մանրանկարի և գծանկարի վերականգնման համար:

Մոդուլի տևողությունը 72 ժամ

տեսական 26 ժամ

գործնական 46 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-014 «Արվեստի ստեղծագործությունների ընդօրինակում», ԱՍՎ -5-11-017 «Վերականգնման նյութերի տեխնիկա և տեխնոլոգիա», ԱՍՎ -5-11-021 «Հայ արվեստի նորագույն շրջանի առանձնահատկությունները» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. ճանաչել և տարբերակել գրաֆիկական աշխատանքի նյութը և նկարագրել դրությունը,
2. իրականացնել ախտահանում, լվացում,
3. ճանաչել թղթերի տեսակները (մանր աղացած, խոշոր աղացած, քիմիական բաղադրությունը),
4. ճանաչել թղթի վարակները (ֆոքսինք, բորբոս, միջատային լաքաներ, ժանգ, ջրային, յուղային, սպիտակուցային հետքեր),
5. կատարել վնասվածքների, կորուստների լրացում,
6. իրականացնել հարթեցում, երանգավորում,

7. պատրաստել կատարված աշխատանքի փաստաթուղթ:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ճանաչել և տարբերակել գրաֆիկական աշխատանքի նյութը և նկարագրել դրությունը

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է նկարագրում տեխնիկան (թուղթ, մատիտ, տուշ, ջրաներկ, գուաշ, սեպիա),

բ. ճիշտ է ներկայացնում ցուցանմուշի վնասվածները (քարտեզագրություն),

գ. ճիշտ է ճանաչում վարակները, լաքաների տիպերը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է մանրամասն նկարագրել որևէ գրաֆիկական աշխատանք՝ քարտեզագրությամբ:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. տեխնիկայի նկարագրում (թուղթ, մատիտ, տուշ, ջրաներկ, գուաշ, սեպիա),

բ. քարտեզագրություն,

գ. վարակները /բորբոս, ֆոքսինգ, միջատային վարակներ/, լաքաների տիպերը /ջրային, յուղային, սպիտակուցային, ժանգ, միջատի հետքեր/:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե հիմնականում ճիշտ է կատարում քարտեզագրությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ երևէ գրաֆիկական աշխատանք /ցանկալի է վնասված/, համապատասխան գրականություն, թուղթ, գրիչ, քանոն՝ չափագրության համար:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 4 ժամ

Արդյունք 2. Իրականացնել ախտահանում, լվացում

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ստուգում ներկի ջրակայությունը,

բ. ճիշտ է ստուգում թղթի բաղադրությունը և ռեակցիան քիմիական լուծույթների նկատմամբ,

գ. համապատասխան լուծույթով ճիշտ է կատարում ներկաշերտի ամրացումը,

դ. ճիշտ է պատրաստում մի քանի համապատասխան քիմիական լուծույթներ՝ լաքաների հեռացման, թղթի սպիտակեցման համար,

ե. ճիշտ է օգտագործում լվացման և ախտահանման համար նախատեսված թղթերը (միկալենտ, թեյի թուղթ, վիսկոզա, ֆիլտրի թուղթ և այլն),

զ. ճիշտ է իրականացնում ախտահանումը, լվացումը և լաքաներից թղթի մաքրումը, չորացումը ծանրության տակ՝ օգտագործելով ճիշտ թղթեր, գործվածք և ծանրություն:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են

ա. ներկի ջրակայության և թղթի բաղադրության ստուգում,

բ. ներկաշերտի ամրացում,

գ. սպիտակում և ախտահանում,

դ. չորացում և հարթեցում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում և ստուգում է ներկի ջրակայունությունը և թղթի բաղադրությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ մի քանի քիմիական ախտահանիչ նյութերով հագեցած լաբորատորիա, որը ապահովված է հոսող ջրով, լայն վաննաներ՝ թղթի վլացումն իրականացնելու համար, մեխ չափերի և տարբեր համարների վրձիններ, այս պրոցեսները իրականացնելու համար անհրաժեշտ թղթեր, չորոցներ և հարթելու համար նախատեսված գործվածք, ստվարաթուղթ, 1սմ հաստության տախտակներ և պրեսս:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 12 ժամ

Արդյունք 3. Ճանաչել թղթերի տեսակները (մանր աղացած, խոշոր աղացած, քիմիական բաղադրությունը)

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է որոշում թղթի խտությունը և քիմիական բաղադրությունը,

բ. ճիշտ է կատարում փոքր նմուշներով անալիզը՝ քիմիական լուծույթներով:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են

ա. թղթի խտության և քիմիական բաղադրության որոշում

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, քլորամին, ամիակ, մաքուր ջուր, կաթոց, փորձը դնելու համար ապակի:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 4. Ճանաչել թղթի վարակները (ֆոքսինք, բորբոս, միջատային լաքաներ, ժանգ, ջրային, յուղային, սպիտակուցային հետքեր)

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է կատարում համապատասխան վարակի ախտահանումը,
- բ. ճիշտ է իրականացնում թղթի սպիտակեցումը, լաքաների հեռացումը,
- գ. անկայուն նյութերի դեպքում ճիշտ է գործում՝ նկատի ունենալով դրանց նրբությունները:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են

- ա. վարակների ախտահանում,
- բ. սպիտակեցում, լաքաների հեռացում,
- գ. անկայուն նյութերի դեպքում ճիշտ գործողության կազմակերպում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է ներկայացնում գործընթացը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, ախտահանիչ քիմիական նյութերի լուծույթներ, վաննաներ, հոսող ջուր, տամպոններ, պրոցեսի իրականացման համար նախատեսած հատուկ թղթեր /միկալենտ, վիսկոզա, ֆիլտրի թուղթ/:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 8 ժամ

Արդյունք 5. Կատարել վնասվածքների, կորուստների լրացում

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է սոսնձում ճաքերը և պատռվածքները,
- բ. ճիշտ է լրացնում բացակայող հատվածը (կցուն, թղթի զանգված և այլն),
- գ. ճիշտ է կատարում կրկնապատումն՝ օգտագործելով նախատեսված կրկնապատման թուղթը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են

- ա. ճաքերի և պատռվածքների սոսնձում և մշակում,
- բ. բացակայող հատվածների լրացում,
- գ. կրկնապատումն:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ թղթի սոսինձ, տարբեր թղթեր, որոնցով պետք է կատարվեն լրացումները, նշտար, հղկաթուղթ, կրկնապատման թղթեր, հարթելու միջոցներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 8 ժամ

Արդյունք 6. Իրականացնել հարթեցում, երանգավորում

Կատարման չափանիշները

ա. հարթեցման համար ընտրում է ճիշտ նյութեր (միկալենտ և ֆիլտրի թուղթ, ֆլանելինի գործվածք՝ 2-3մմ հաստությամբ/, 1-1.5սմ հաստությամբ տախտակ (լիստի չափերին համապատասխան) և ծանրոց,

բ. գործընթացին հետևում է 1-2 շաբաթ, ժամանակին փոխում է միջադիր նյութերը՝ խոնավությունը հանելու նպատակով,

գ. վերջնական չորացումից և հարթեցումից հետո ճիշտ ընտրված նյութերով կատարում է երանգավորում:

Գնահատման միջոց

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են

ա. հարթեցման համար նյութերի նախապատրաստում

բ. երանգավերում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում և կատարում է երանգավորում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է համապատասխան թղթեր, գործվածք, տախտակներ, ծանրոց, որոնցով պետք է կատարվեն հարթեցման աշխատանքները, տարբեր ներկանյութեր և վրձիներ՝ երանգավորման համար:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 8 ժամ

Արդյունք 7. Պատրաստել կատարված աշխատանքի փաստաթուղթ

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է նկարագրում ողջ կատարված աշխատանքը,

բ. ճիշտ է ներկայացնում ժամանակագրությունը և օգտագործված նյութերը՝ իրենց տոկոսային հարաբերակցությամբ:

Գնահատման միջոց

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը ճիշտ է, եթե, ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են

ա. կատարված աշխատանքի նկարագրություն,

բ. ժամանակագրություն և օգտագործված նյութեր:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ մշակած ձև /բլանկի նման/, որտեղ, համապատասխան սյունակներում, ըստ պրոցեսների կնկարագրվի ողջ կատարված աշխատանքը՝ ամենայն մանրամասնությամբ:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե կատարված աշխատանքի նկարագրությունը ճիշտ է:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 4 ժամ

գործնական 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՏՈՑԱՅԻՆ ԳԵՂԱՆԿԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Մոդուլի դասիչը ԱՍՎ -5-11-025

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ կիրառական գիտելիքներ և հմտություններ՝ հաստոցային գեղանկարի կոնսերվացման, ախտահանման և վերականգնման համար:

Մոդուլի տևողությունը 54 ժամ

տեսական 18 ժամ

գործնական 36 ժամ

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրի ԱՍՎ -5-11-014 «Արվեստի ստեղծագործությունների ընդօրինակում», ԱՍՎ -5-11-017 «Վերականգնման նյութերի տեխնիկա և տեխնոլոգիա», ԱՍՎ -5-11-021 «Հայ արվեստի նորագույն շրջանի առանձնահատկությունները» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա

1. ստեղծել աշխատանքային պայմաններ,
2. կատարել հաստոցային գեղանկարի կտավի հանում ենթաշրջանակից և կտավի և ենթաշրջանակի թերությունների շտկում,
3. տիրապետել հաստոցային գեղանկարի վնասված մակերեսի սոսնձման աշխատանքներին,
4. իրականացնել հաստոցային գեղանկարի կրկնապատում,
5. կատարել հաստոցային գեղանկարի պատռված հատվածի ամրացում,
6. կատարել հաստոցային գեղանկարի եզրաշերտի վերականգնում,

7. տիրապետել հաստոցային գեղանկարի հին լաքի մաքրման և նոր լաքապատման աշխատանքներին,
8. իրականացնել հաստոցային գեղանկարի բացակայող հատվածների լրացում,
9. Կատարել հաստոցային գեղանկարի վերադարձ ենթաշրջանակին և լաքապատում:

Մոդուլի գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ստեղծել աշխատանքային պայմաններ

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է ստեղծում համապատասխան լաբորատոր պայմանները և պատրաստում սարքավորումները,
- բ. ճիշտ է կատարում նկարի ընդհանուր մակերեսի ֆոտոնկարահանումը և վնասված մասերի ֆիքսումը, քարտեզավորումը,
- գ. ճիշտ է ապահովում նկարի ներկի, կտավի, ենթաշրջանակի և այլ օգտագործված նյութերի ֆիզիկա-քիմիական փորձաքննության անցկացում:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. համապատասխան լաբորատոր պայմանների և սարքավորումների նախապատրաստում,
- բ. ֆոտոնկարահանում և վնասված մասերի ֆիքսում, քարտեզավորում,
- գ. ֆիզիկա-քիմիական փորձաքննության անցկացում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային տարածք և տարրական միջոցներ՝ ֆոտոապարատ, ներկաշերտի քննության համար մի քանի քիմիական նյութեր:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 2. Կատարել հաստոցային գեղանկարի կտավի հանում ենթաշրջանակից և կտավի և ենթաշրջանակի թերությունների շտկում

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է կատարում է ենթաշրջանակից մեխերի դուրս քաշումը և կտավի առանձնացումը ենթաշրջանակից,
- բ. ճիշտ է իրականացնում ենթաշրջանակի ձևախախտման շտկումը,
- գ. ճիշտ է իրականացնում ենթաշրջանակի վրա կտավի վերածգումն ու ամրացումը,

դ. անհրաժեշտության դեպքում ճիշտ է կատարում կտավի կորության կամ կծկվածության շտկումը ենթաշրջանակը սեպերի կամ գոտիների միջոցով:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի կտավը հանել ենթաշրջանակից և նորից ձգել ենթաշրջանակի վրա:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. կտավի առանձնացումը ենթաշրջանակից,

բ. ձևախախտման շտկումը,

գ. կտավի վերաձգում և ամրացում, հարթեցում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ արվեստանոց՝ հագեցած գործիքներով, որտեղ կկատարվեն նախնական աշխատանքներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 3. Տիրապետել հաստոցային գեղանկարի վնասված մակերեսի սոսնձման աշխատանքներին

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կատարում պրոֆիլակտիկ աշխատանքները,

բ. ճիշտ է ստուգում կատարված աշխատանքը, գնահատում և անհրաժեշտության դեպքում վերակատարում է այն:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

ա. պրոֆիլակտիկ աշխատանքներ,

բ. աշխատանքի գնահատում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ արվեստանոց՝ հագեցած գործիքներով, պրոֆիլակտիկայի համար անհրաժեշտ թղթերով և սոսնձանյութերով:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 4 ժամ

Արդյունք 4. Իրականացնել հաստոցային գեղանկարի կրկնապատում

Կատարման չափանիշները

- ա. նոր կտավը ճիշտ է ձգում աշխատանքային ենթաշրջանակի վրա,
- բ. ճիշտ է իրականացնում նոր կտավի սոսնձում,
- գ. ճիշտ է կատարում կրկնապատվող նկարի կտավի բարակացումը՝ անհրաժեշտության դեպքում,
- դ. ճիշտ է կատարում կրկնապատվող նկարի ետին հատվածի սոսնձումը,
- ե. ճիշտ է կատարում նոր կտավի և կրկնապատվող նկարի հավելյալ սոսնձումը,
- զ. ճիշտ է իրագործում կրկնապատվող նկարի տեղադրումը նոր կտավին և հարթեցումը,
- է. ճիշտ է վերադարձնում կրկնապատվող նկարը հիմնական ենթաշրջանակին:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի մի կտոր կտավ կրկնապատել մեկ այլ կտավի վրա:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. նոր կտավի սոսնձում, ձգում աշխատանքային ենթաշրջանակի վրա,
- բ. կրկնապատվող կտավի սոսնձում և ամրացում նոր կտավին,
- գ. կրկնապատված կտավի ձգում ենթաշրջանակին,

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ արվեստանոց, կտավների տեսակներ, սոսնձանյութեր, աշխատանքային ենթաշրջանակ, արդուկ /համապատասխան ջերմաստիճանով/, նշտար, հղկաթուղթ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 12 ժամ

Արդյունք 5. Կատարել հաստոցային գեղանկարի պատռված հատվածի ամրացում

Կատարման չափանիշները

- ա. պատռված հատվածում ճիշտ է կատարում պրոֆիլակտիկան,
- բ. ճիշտ է կատարում կտավի պատռված հատվածի ծայրերի մշակումը սուր գործիքով համապատասխան թելերից ստացած մազաթելերից և սոսնձից ստացված զանգվածով ամրացնում պատռվածքը,
- գ. ճիշտ է կատարում կտավի պատռված հատվածի ամրացումը արդուկման եղանակով,
- դ. ճիշտ է կատարում կտավի պատռված հատվածի երեսամասի թղթից անջատումը և սոսնձից մաքրումը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի պատռված կտավի կտորի պատռվածքը ամրացնել:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. պրոֆիլակտիկա,
- բ. պատռված հատվածի ծայրերի մշակումը,
- գ. պատռված հատվածի ամրացում,
- դ. պրոֆիլակտիկայի և սոսնձի մնացորդների մաքրում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ արվեստանոց, կտավների տեսակներ, սոսնձանյութեր, աշխատանքային ենթաշրջանակ, արդուկ /համապատասխան ջերմաստիճանով/, նշտար հղկաթուղթ, բամբակյա տամպոններ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 4 ժամ

Արդյունք 6. Կատարել հաստոցային գեղանկարի եզրաշերտի վերականգնում

Կատարման չափանիշները

- ա. համապատասխան կտավից կտրում է ճիշտ չափերի եզրաշերտեր
- բ. կտավը ճիշտ է տեղադրում և ձգում հարթ մակերեսի վրա,
- գ. ճիշտ է կատարում նկարի եզրաշերտի ախտահանումը,
- դ. ճիշտ է կատարում նկարի եզրաշերտի և նախապես պատրաստված ժապավենների մշակումը և սոսնձապատումը,
- ե. ճիշտ է կատարում ժապավենների ամրացումը արդուկման և մերսման եղանակներով:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ժապավեններ՝ եզրաշերտերին ամրացնելու համար:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. նոր եզրաշերտի պատրաստում,
 - բ. եզրաշերտի ամրացում:
- Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ արվեստանոց, կտավների տեսակներ, սոսնձանյութեր, աշխատանքային ենթաշրջանակ, արդուկ /համապատասխան ջերմաստիճանով/, նշտար:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 4 ժամ

Արդյունք 7. Տիրապետել հաստոցային գեղանկարի հին լաքի մաքրման և նոր լաքապատման աշխատանքներին

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է պատրաստում լաքահանող լուծույթը,
- բ. ճիշտ է օգտվում շոգեհարիչ գործիքներից և սարքավորումներից,
- գ. համապատասխան լաքով ճիշտ և համաչափ լաքապատում է մակերեսը:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի մաքրել լաքի շերտը և կատարել նոր լաքապատում:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. լաքահանող լուծույթի պատրաստում և լաքահանում,
 - բ. նոր լաքապատում:
- Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ լուծիչներ, լաքեր, բամբակյա տամպոններ, տեզինե ձեռնոցներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 4 ժամ

Արդյունք 8. Իրականացնել հաստոցային գեղանկարի բացակայող հատվածների լրացում

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է ընտրում և ձևում համապատասխան կտավը՝ բացակայող հատվածը լրացնելու համար,
- բ. անհրաժեշտության դեպքում կատարում է ճիշտ կրկնապատում,
- գ. լրացված հատվածում ճիշտ է կատարում հիմնաներկը,
- դ. ըստ վրձնահարվածների ճիշտ է մշակում հիմնաներկը, ստանում է համապատասխան նյութականություն,
- ե. ճիշտ ընտրված ներկանյութով կատարում է երանգավորում:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի լրացնել կտավի բացակայող հատվածը:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են.

- ա. համապատասխան կտավի ձևում և ամրացում,
- բ. հիմնաներկ, հիմնաներկի մշակում,

գ. երանգավորում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ բացակայող հատվածով մի կտավ, կտավների տեսականի /որոնցից պետք է ընտրվի աշխատանքի համար համապատասխան կտավ/, սոսնձանյութեր արդուկ, ծանրոցներ:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 2 ժամ

Արդյունք 9. Կատարել հաստոցային գեղանկարի վերադարձ ենթաշրջանակին և լաքապատում

Կատարման չափանիշները

ա. մինչ լաքապատումը ճիշտ է ապահովում տարածքի ստերիլությունը և ճիշտ է կարգավորում օդի ջերմաստիճանն ու խոնավությունը,

աշխատանքային տարածքի նախապատրաստում

բ. ճիշտ է կտավն անվնաս անջատում հարթ մակերեսից,

գ. կտավը զգուշությամբ ձգում է ենթաշրջանակին՝ ուշադրություն դարձնելով եզրաշերտերին,

դ. ճիշտ է կատարում լրացուցիչ ձգումը սեպերի միջոցով և համապատասխան լաքով կատարում է լաքապատում:

Գնահատման միջոց

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի լրացնել ենթաշրջանակից հանված մի կտավ ետ ձգել ենթաշրջանակին և լաքապատել:

Արդյունքի ծրագրային մանրամասներն են:

ա. աշխատանքային տարածքի նախապատրաստում,

բ. կտավի վերադարձ ենթաշրջանակին,

գ. սեպերով ձգում,

դ. նոր լաքապատում:

Արդյունքի յուրացումը դրական է, եթե աշխատանքի հիմնական մասն արված է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումն իրականացվում է դասախոսության և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ ենթաշրջանակ, կտավ, լաք, տամպոն կամ վրձին:

Ուսուցման երաշխավորվող ժամաքանակը

տեսական 2 ժամ

գործնական 2 ժամ